



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2323

891.995

U-84

A $\frac{14}{14}$

Дому. 32



891-9915
Ա-84 *A* $\frac{11}{14}$

un



Ք Ն Ա Ր Ի Կ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

ՄԱՐ 188
48 2

Ա.Շ.ԽԱ.ՏԱ.ՍԻՐԵՑ

1810
40348

Աղեքսանյր Արարատեանց



Տ Փ Խ Ի Ս

Ի Տպարանի Համբ. Էնփիաճիանցի և Ընկ.



5751

Доволено цензурою. 22 Октября 1880 года г. Тифлисъ.
Старшин цензуръ Меликъ-Меграбовъ.

0880



Յառաջարան:

Ա.

Մեր մէջ գեռ չէ տեսնուած, որ ընթերցանու-
թեան հասած և փոքր 'ի շատէ վարժուած աշակերտը
իր խելքին ու մտքին յարմար մի գիրք գտնէր և սիրե-
ով կարգար նորան այնպէս, ինչպէս ուսումնասէր երիտա-
սարքը կարդումէ Պուշկինի և այլ գիտնական-
ների ու բանաստեղծների գրուածքները: Սա
մի ճշմարտութիւն է: Տփլիսի գրատները՝ բացի վեր-
ջին տարիներէս հրատարակած դասադրբերից՝ ուրիշ
ոչինչ չ'ունեն մանկական և ինչ որ ունեն — բոլորը
հին ու մանուկների համար անխորհուրդ գրքեր են:
Մենք մանկական ընթերցանութեան գր-
քեր չունենք ..

Բ.

Օրինակ. Արշակը այս կամայն ուսումնարանի
աշակերտն է, գրավարժ կարդում — գրում է. գիտէ դա-
տել, սպաստխանել և այլն: Հարցնում ես. «Արշակ,
ի՞նչ գրքեր ունես:» — Պատասխանում է. «Մայրենի լի-
զու», «Учебникъ», «Աւետարան» կամ «Նահապետական
աշխարհ»...
» Ել ի՞նչ:
— Ել ոչինչ:
» Բեզ որ մի գիրք բաշխեմ, չե՞ս կարգայ:

2004

— Վարժապետը չի թողնում ուրիշ զիրք կարգամասումէ՝ դասը պէտք է կարգաս, սովորես:

« Գասը որ սովորես յետոյ... »

— Յետոյ քիչ կը խաղամ ու էլի կը նստեմ, կը կարգամ:

« Գէ ան էս զիրքը քեզ եմ բաշխում. հէնց քո խելքի բան է, քեզ համար չափած ու ձեւած, որ համ ուրախ—ուրախ կարգաս, համ կարգացածից քեր տանը—քո ընկերներին պատմես: »

Արշակը ձեռքիցդ կ'առնի ու սիրով կը սկսի կարգալ: Բայց ի՞նչ զիրք պէտք է տաս նրան, որ բարոյապէս կրթի, մատչելի ու սիրելի լինի, բաց անի նրա փակ մտքերը, կեանքից թարգման լինելով բազմակողմանի կերպով տեղեկութիւններ հասցնի և այդ պէտով սովորացնել մանուկին ինքնա կրթութիւն... »

Գ.

Եւրոպայի և արդէն և մանկական ասպարէզին նուիրվելու: Մեր մանկավարժներից ով որ մի վէպ ունի գրած ու հրատարակած, լաւ կ'անի, եթէ միւսը թողնէ մանուկներէ համար մի խորհրդաւոր բան գրի, թարմանի, ցոյց տայ նրանց այն բոլորը՝ ինչ որ բարոյապէս լայնացնում էր նրանց մտաւոր հօրիցօնը, աշխոյժ էր տալիս յաւաքադիմութեան, սէր էր զարթեցնում ընթերցանութեան, ինքնակիրթ էր կացուցանում և ինչ որ դուրս էր ուսումնարանից, մթին ու թաքուն մնացած մանուկի համար . . .

Մանկական ընթերցանութեան զիրք յօրինողը մեծ փորձառութիւն, հմտութիւն և զգուշութիւն

պէտք է ունենայ. նա շատախօսութիւնից ու վերացական զաղափարներից պէտք է փախչի. նա մանկութեանն է դիմում և հետևապէս շաւ ուսումնասիրած պէտք է լինի մեր ոնց «մանկական աշխարհը»: Սորանից հետևում է ասել, որ այդ աշխարհում գործ կատարելը ամեն գլխի բան չէ... »

Գ.

Առ հասարակ մեր զիւղացիները կարողանում են իրենց երեխաներին սովորացնել աշխատասիրութիւն, գութանի մաճկալութիւն կամ հոտաղութիւն, փէտատաշութիւն, չութ վարել և մաճը բռնել, սերմը ցանել, այգիների որթան մատը կտրել, ցորենը դարմանից ու միզից բաժանել՝ քամու տալով, հասկերը կրտելով, ջահիլացնել, պապական աւանդութիւններով երեխանց զուլը լցնել հեթիաթներ ու պոնդներ, նաղեր ու առասպէլներ, զանազան տեսակ զրուցուածքներ և այլ բժշկականութիւններ, խաղեր, հացահատիկների ու պտուղների տեսակները, ծառերի ու թփերի, ծաղիկների ու խօտերի, քարերի ու հողերի, թռչունների ու զազանների, սարքերի ու գործիքների անունները սովորացնել. թէ որը ի՞նչին է պէտք և այլն: Գիւղական ծնողքը այս ամենը և դորանց պէս հաղար ու մի բան սովորացնում են իրենց երեխաներին, միայն առանց հետևողութեան աստիճանի, առանց սիստեմական ուղղութեան, առանց կարգ ու կանօնի. այդ բանում նրանք պրօգրամմայ չունեն. մի

ընդհանուր հայեացք միայն լուսն է տալիս ամեն պակասութեան...

Մանկական ընթերցանութեան գիրքը պէտք է այնպէս լինի յօրինած, որ կապ ունենայ լրացնելու սովորածների հետ, նոր ուղղութիւն տայ և աւելի կոկ կերպով գրի անցնելով այն բոլորը բարոյապէս հիմնական արմատներ ձգի երեխայի մէջ, կրթողական նշանակութիւն ունենայ, իսկ արհամարհելին միշտ աշխատել խլելու նրան ից...

Ե.

Այս գիրքը թէ որքան հուսատարիմ է մեր Յառաջաբանին և իր վերնագրին և առաջարկելու մանուկներին, ինչպէս ընթերցանութեան յարմար մի գիրք, թող մեր պարբերական թերթերը վկայեն, Այս իրենց պարտքն է, որ չը պէտք է զանց առնեն: Եւ մենք պատրաստ ենք օգուտ քաղել քննադատների բոլոր արժանաւոր նկատողութիւններից...

Իսկ եթէ մենք միանգամայն սխալ և անարժան կը համարուենք այս քայլափոխում, թող յարգելի պատճառներ յառաջ բերելով մեզ արհամարհեն, պատժեն, մինչև որ կ'ուսումնասիրէինք այդ ասպարէզը — իր բուն նշանակութիւնով: Այսքան...*

Աղերսանդր Արարատեանց.

*) Հանելուկներն ու շուտասելուկները մենք մասամբ հաւաքել ենք գաւառներից, միայն լեզուն պար-

զացրել ենք: Թէ մինը, թէ միւսը մենք յարմար դատեցինք այնպէս տեղաւորելու գրքի մէջ, ինչպէս որ արել ենք: Գորա օգուտներից մինն էլ այն է որ ընթերցողը միշտ միատեսակ զբամուղնք չէ ունենում և միանման նիւթերով զբաղվում: Հանելուկների պատասխանները գրքի վերջում գրեցինք համարով:

Հեղինակ:

1 /

Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք
արժանիքն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք
արժանիքն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք

Վերջում

Այս գրքի վերջում իմանալիք
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն

Այս գրքի վերջում իմանալիք
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն
զորոնք ի վերջոս իրենց արժանիքն
արժանաբար զնորոնք արժանիքն

Վերջում

Վերջում

ՆՈՒՆԻ

Ընթերցանք մանուկներին

Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք


Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք

Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք



Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք
Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք
Հարկերն զորոնք ի վերջոս իրենց
արժանիքն արժանաբար զնորոնք

Ծիտիկ եմ ծվլլալէ,
Հօր մորթած եմ,
Մօր կերած եմ,
Ազիզ քվոր —
Լաց էլած եմ. . .



Ճուտիկ եմ ծվծվալէ,
Հօր կորցրած եմ,
Մօր պահած եմ,
Ազիզ աղբօր —
Տաք ծոցին եմ. . .



Ք Ն Ա Ր Ի Կ

Երեխան Օրօրօցում.

Մայրը երեխային օրօրօցում քուն անելիս, նրան փաթաթում է մաքուր փայլաներով ու փորահլէքով և ապա օրօրօ կանչում քողքը ձայնով: Սկզբում երեխան ուզում է իրան ազատել կապանքից. բայց յետոյ քնի քաղցրիկ հրեշտակը ցած գալով, իր թևերը փռում է նորա աչքերի կոպերի վերայ և քաղցր քնի մէջ քցում նորան:

Մանկական օրօրօցը մարդկութեան աճեցողութեան օսկզբնաւորութիւնն է: Այս քաղցր օրերը աստիճանաբար անցնում են և մանկական կեանքը փոխվելով, օրօրօցն էլ փոխվում է:

Կերպարանափոխուած մանուկը այժմ մտնում է կեանքի աշխատութեան օրօրօցը և ով որ չի հնազանդվում սորան, նորա համար այդ օրօրօցը մթին ու խոնաւ բան դ կը լինի. . .

Օրօրօցում մայրը կապեց

Սիրուն մանկիկ և քուն ասեց.

Խեղճ մանկիկը լաց էր լինում,

Պինդ կապանքը նորան սխմում,

Լացացնումէր, լացացնումէր:

Նա ուզումէր ձեռք—ոտք շարժել,

Քիչ վնգվնգալ, քիչ խաղ անել.

Մօր նանիկին ականջ չէր դնում,

Ուզումէր նա—ազատութիւն,

Եւ լալումէր, և սիրումէր:


Ազատութիւն — հաւասար է

Մեծ ու փոքրին և Ազգերին:

Դուք էլ տղայք գիրք կարդացէք,

Գիր սիրեցէք, որ բանդ չ'ընկնէք

Օրօրօցում, օրօրօցում,




Հանելուկներ:

1. Մի ծականի դափաղայ, բլբուլը միջին կզկզայ:
2. Մութը տուն — հարածին միջին քնած:
3. Էփումեմ սնդում է, աղ եմ անում — անայի է:
4. Կարմիր եկեղեցի, գանակով տուի, բաց արի:

Վերջը զգաց:

Գիւղացին կարող է քաղաքացի դառնալ, իսկ քաղաքացու համար դժուար է գիւղացի դառնալ: Աշխատիր, գիւղացի, տրեխդ չէքմայ դառնայ, չուխէդ

մահոց ու դրախ, միտքդ էլ դսրանց հետ աստիճանաբար բարձրանայ: Բայց դու, քաղաքացի, թէ չէքմադ տրէխ շինեցիր, տրէխ էլ չես գտնիլ: Ասած է տաւարատիրոջը արխացու կաշի կը հաւատան տալ, քեզ ոչինչ չեն հաւատալ:



Դուք խօ գիտէք մեր գիւղացուն,

Թէ ինչպէս նա անմեղ, սիրուն

Եւ միամիտ կեանք է վարում,

Եւ քրտինքով նա հաց դադում:

Այդ գիւղացին թղթի կտոր

Չեռին՝ գնաց բէգի մօտը.

»Գրիր, աղա, որ էս թուղթը

»Ղարկեմ տղիս առաւուտը:

-- Խի՞ կը գրեմ էդպէս անփող,

Նա մտածեց. բայց այդ չ'ասեց:

— Լաւ, էդ մնա, էքո՛ւց, ա Պող.

Այսպէս միայն պատասխանեց:



Դուք տեսել էք մեր եղբօրը

Թէ դաշտերում թէ ձորերում,

Բայց գութանն ու փոքր արօրը
Նորա ձեռքով գործ են տեսնում:

Հարկաւոր էր այդ խեղճ մարդին,
Գնաց՝ գտաւ իր տիրացուին.

»Վաննին պարտեմ երեսուն խան,
»Սանաթ գրի տիրացու ջան:

— Ե՛հ, աղբէր զահլա տարաք,
Հէնց տիրացու, միայն տիրացու.
Տէրտէր ունէք, զնա՛, նրան
Ասա՛ կը գրի, փող տուր միայն.

Դուք տեսել էք մեր գիւղացուն
Իր արտումը հունձ անելիս,
Որի հետ էլ պարզ ու սիրուն,
Քաղցր և անուշ երգ երգելիս:

Այդ գիւղացուն մի օր կանչեց
Իր մեծ քոխվան և այս ասեց.
»Չատի, գիտե՛ս որ էս թուղթը
»Քու պարտքն ա՛րքու սանաթը:

— Դէ, քոխվա ջան, ինչ եմ ասում,

Գիր չեմ գիտում—բէիր չեմ գիտում:
Ես իմ պարտքից յետ չեմ կանգնիլ,
Թէ որ հաստատ պարտ եմ վաննին...»

Դուք տեսել էք մեր գիւղացուն
Հին շորերում պատսպարուած.
Տրէխներ են նորա ոտքին,
Բրդէ սև շալ էլ թիկունքին:

Այդ գիւղացին առաւոտեան
Մտքամոլոր մտն էր գալիս.
»Մ՛ն—էս թուղթը, այ—քոխվա ջան,
»Մի ձեռք քաշե՛ ու փեչատի.
»Ա՛խ, իմացի իմ սև պարտքը,
»Սաղ ու մեռ կա— ո՛վ ի՛նչ գիտի: . . .

— Քեզ հմար ա ինձ գիր շանց տուել
Ողորմածիկ տէր զուկասը՞.
Տաս շաւի ա, վեր դիր, աղբէր,
Կը հաստատեմ, համա տասը. . . .

»Ե՛հ, հաւամ՝ ա, աղբէր, մախլան,

»Որ դրել—կարդալն էլ չ'իմանամ ...»
 Վերջը զգաց մեր գիւղացին,
 Մօնթ ուղարկեց իր տղային:




Հանելուկներ.

5. Փոքրիկ եկեղեցի, չոքեցի, թխեցի:
6. Ոտի չափ բոյ ունի, մէջը լեքը բան ունի:
7. Թուրքի տղէն վաղ ու վազ, դոտիկ ունի 100 զագ:



Մի Յոյս.

Աշխարհիս երեսին մարդիկը յուսով են ապրում:
 յոյսը կը կորցնես, կը մոյրովես: Անյոյս սչ ով չը կայ:
 Յուսարով և աշխատելով կը հասնես նպատակիդ: Ան-
 յոյս աշխատանքը պտուղ չի տալ: Կը յուսաս և չես
 աշխատել, նոյնպէս անպտուղ կը մնայ: Ուրիմն, պէտք
 է յուսալ և աշխատել, պարապ չը մնալ: Զբաւոր,
 ծերացած մարդիկը իրենց յոյսը դնումեն իրենց նոր
 սերունդի—մանուկների վերայ և նորանց ուսում
 տալով՝ մի օր վերկութիւն են դանում...



Նա էլ մի յոյս է,
 Այն մի յոյս է պառաւի որդին,
 Միակ մսիթար քանդուած օջաղին.

Եւ այդ օջաղը
 Մեծ տուն էր առաջ, բայց այժմ ընկած
 Շէն էր և հարուստ, այժմ մշմեղած .



Չէ՞ որ տան շէմքեց
 Եօթը աժդահա—եօթը տղամարդ
 Սիրով դուրս ու տուն էին անսւմ միշտ:

Մեծ սիւնի կողմին
 Եօթը օրօրոց օրօրվում էին,
 Եօթը հրեշտակ էլ խաղում էին:

Մեծ հարստութիւն
 Ունէր այն տունը հանդերում, դաշտում,
 Տան մեծութիւնը մարդ վախեցնում:

Նա հիւրասէր էր,
 Ամենայն ճամբորդ և օտարական
 Ողջունում էին այդ մեծ, հարուստ տան:

Քոն էր աղբատը,
Քոն ժողովուրդը, քեասիբ գիւղացին,
Քոն էր և տունը՝ խոնարհ իր բաղտին:

Տան նազապետը
Այդ բարձրութիւնից միշտ ցած էր նայում
Եւ սրտանու էր «փառք քեզ տէր» կանչում...



Այսպէս օջաղը
Խղճուկ պառաւի վառ էր և կանգուն,
Սա վայելում էր միշտ ուրախութիւն:

Բայց անիւր,
Բաղդի անիւր էլ չը գլորվեց,
Եւ մեծ տան հիմքը շատ շուտով փլեց:

Մուտը գիշերին
Քիւրդերից մի խումբ եկաւ տան վերայ,
Քար ու քանդ արեց տունը անխնայ...

Չարդ ու փշրելով,
Եղած—չեղածը նա աւար արեց,
Մեծ նազապետի տունը աւիրեց...



Անցան տարիներ,
Տարիներ՝ որոնք թողեցին միայն
Տխուր յիշատակ մեր մտածութեանը...



Ահա այդ տանեց
Մնացել էր միայն Նազու պառաւը,
Նազու պառաւը և իր մի յոյսը:

Նա խղճալի էր,
Ինչպէս մի անձար՝ որ պէտք է պահէր
Ինքը—իրան էլ, որը զաւակին էլ:

Սորա տան դարդը
Չորս պատերն էին սև դարդակ տաշտը,
Երկու չուլ—փալաս և հին տաշտակը:

Նորա սև կատուն,
Խեղճ, քաղցած փորով «միաւ» էր անում,
Իսկ չալտիկ հաւը սոված կռկռում:

Պառան ամեն օր
Եւքը պփռած ճիւղակ էր մանում,
Բրդի տիրոջից կոպէկ ստանում:

Եւ խղճուկ տանը
 Չէր լուսաւորում գիշերը լամպան,
 Յերէկն էլ մարդիկ նրան չէին պաշտպան:

Այսպէս պառաւի
 Ճպռտ աչերում արցունք էր ցոլում,
 Եւ ա՛յն արցունքը որդին էր սրբում ...

Բաղդի բերմունք է:
 Երկրիս երեսին շատ տուն կայ աղքատ,
 Հատտուն էլ հարուստ, չէնքը մի պալատ:

Նախնիքն ասել են—
 Աշխարհքը պատող չարխի—փալագ է,
 Որը բարձրանում, որը ընկնում է:

Վէր ընկնող տունը,
 Վէր ընկնող մարդը թէ օգնող չունի,
 Եւ մի ձեռք բռնող—նա անդունդ կ'ընկնի:

Բայց կայ մի Օգնող,
 Միակ պաշապան մեր հոգու, մարմնու,
 որին ամենքս խոնարհ ենք և հլու:

Նա է բաժանում
 Աշխարհքիս փառքը: Նա հրամայում է

Յոյս ունեցիր,
 Հալալ աշխատիր,
 Փառք ժառանգիր:

Նազու պառաւի
 Վէր ընկած տունն էլ տէրին էր յանձնուած,
 Իր որդին նորա խնամքին նուիրուած:

Եւ Արարիչը
 Բոկոտիկ որբին այնպէս պահում էր,
 Մի կտոր չոր հաց միշտ հասցնում էր...

Մի անգամ Նազուն
 Խոտուած սրտով պատմեց իր որդուն,
 Թէ ինչպէս առաջ հարուստ էր իր տուն:

Նա այդ պատմում էր
 Որպէս մի հեքեաթ, մի նազու առակ,
 Այդպէս տղային աւանդում կտակ:

Հատ խօսեց, պատմեց,
Եւ սրտաճմլեկ ձայնին ուժ տալով
Գրկեց իր որդուն ու խօսքը փոխեց:

- » Դ՛ո՛ւ էս մնացել,
- » Սիրելի՛ տղա, էն վառ օջաղից,
- » Թող Աստօժ փրկի քեզ ամեն չարից:
- » Դ՛ո՛ւ էս մնացել,
- » Դ՛ո՛ւ էս տանը սինը, իմ՛ սրտի յոյսը,
- » Ո՛վ Աստօժ պաշիր էս դիւար բոյսը . . .

Սսեց ու լացը
Պառաւին խեղդեց . . . միայն Յակովբը,
Փորրիկ Յակովբը մօր լացը սրբեց . . .



Շ ու տ ա ս ե լ ո կ .

Սազը սուփրին սազ կը գայ,
Սուփրէն սազին սազ չի գալ .

Սազը սուփրին սազ
Սուփրէն սազին անսազ : (Կրկին)



(Ն մ ա ն ու թ ի ն)

Թռչնիկն ազատ թռթռալով,
Երգումէ անհագ ծլվալով .
Սիրուն տղաներ շրջան կաղմելով,
Քնացոր երգումեն ուրախ խաղալով:

Հ ա ն ե լ ո կ ն Եր .

8. Փոքր տղէն չափար է անում .
9. Բոզ եզան սրչիցը բռնեմ՛, տափովը տամ .
10. Մի բոլ : երկու լաւաշ աջու ձախ :



Ն ա գ ղ ջ ու մ է :

Ծուլութիւնը վատ հետեանքներ ունի: Ծոյլերը միշտ
խեղճ են մնում կեանքի մէջ: Մեզ հրամայած է,
որ ծուլութիւն չանենք, միայն աշխատանքից յե-
տոյ՝ հանգստանանք: Ծուլանումես, յետոյ կը գղջաս:
Ծիծեռնակը որ այս ժամին ծուլութիւն անի, ծառի
ձէրին կանգնած՝ միայն երգի ու երգի, միւս ժամին
քաղցածութիւնից կընուայն . . . Մի տղայ էլ ծու-
լացաւ, ծուլացաւ, յետոյ այսպէս խելքի եկաւ:



Ինչ օգուտ ինձ պարսպ մնալ,
Աշխատանքում միշտ ծուլանալ,
Մնալ անհոգ և ալարկոտ—
Չ'իմանալ մեռթ, լոյս-առաւոտ:

Ինձ պահողը արքատացաւ,
Տաշտում հացը պակասեցաւ.

Իւզ ու պանիր էլ չը կայ շատ,
Որ ուտէի ես խիստ առատ:

Շորս մաշուեց, արէխ չի ճարվում.

Ընկերքս ինձ էլ չեն նայում.

Նոր խմացայ՝ որ սխալ եմ.

Անմեղ օրեր անցուցել եմ:

»Գնա՛, կարգա՛, զի՛ր սովորի՛ս,

— Ասումէր միշտ հայրս բարի.

Բայց ես մի ծոյլ տղայ փոքրիկ,

Չէի լսում խրատ քաղցրիկ:

Դէ սկսեմ ես աշխատանք,

Եւ քրտինքով ճարեմ փշրանք.

Դուք էլ սիրուն, արի՛ տղէք,

Չեզ օրինակ իմ կեանքն առէք . . .



Հանելուկներ.

11. Մինն ունենք, շատը փէտ, քիչը երկաթ-ամառք
միշտ հանգին է:

- 12. Առնեմ, զառն՝ եմ, գիտես թէ դառն եմ,
ամա կարմիր խնձառն եմ:
- 13. Սև հաւը ծկլթաց, ձուն վէր ընկաւ:



Ձի և էջ.

Ո՛վ չը գիտէ որ ձին է՛լ, էջն էլ բռնակիր
կենդանիներ են. իրանք իրանց չեն կարող բան շինել,
բայց տէրը նրանց ծառայեցնում է իր օգտին: Ձին
էլ, էջն էլ խօսել չեն կարողանում, բայց ձայն են
հանում...

Ձին խրենջում է շատ ուրախ,

Սմբակները գետնին զարկում.

Էջը զուում է շատ ախմախ,

Ականջները ցից պահում . . .

Այս երկուսն էլ լաւ մշակ են,

Եւ մեզ համար բան կը շինեն:

Ել ինչ գիտէք, որ ուտեն խոտ

Եւ ունենան չորս հաստատ ոտ:



Հանելուկներ.

- 14. Սկստակ դաշտ, սև սև էծեր:
- 15. Գոմէջը գոլումը՝ յազին չոլումը:
- 16. Կանաչ կը հիննը: կարմիր թէլ կը տանք,
Թուխ կը կտրենք:



Հօր գործիքները.

Գու արհեստաւոր ես, ուրեմն կ'ունենաս քոյ գործիքները: Ամեն մի գործիք ունի իր յատուկ ա- նունը և մինը միւսից զանազանփումէ: Գործիքներով գործ ենկատարում: Մի գործիքով միւս գործիքի գոր- ծը չեն կարող կատարել: Մատիտով չեն գրում—գծում են, գրիչով չեն գծում—գրում են, ուրագով չեն ծա- կում—տաշում են, դրով չեն տաշում, ծակում են: Իմ հայրն էլ ունի գործիքներ—միայն երկրագործա- կան:

Երբ ես մեր զիւղում լսում եմ թխկոց,
Յիշում եմ հօրս կացինն ու սրոց:

Նա իր կացինով շինում է գուլթան.

Եւ սուր ցաքհատով պատրաստում ցաքան:

Հաբա կրտօցը, դուրն ու խամրտոցը,
Թախն ու զերանդին, շինն ու սրոցը.

Մերնք լաւ զիտեն,

Թէ սրանք ինչ բան են...

Հանելուկներ

- 17. Բերան ունի, լեզու չունի. կաշի ունի, մաղ չունի:
- 18. Մի գոմ տաւար, մի կապով կապած:
- 19. Արարը չոքի, ապանը վեր ըլի:

1010
40348

Մուկիկը սկսեց ծվծվոցը.

Կառուն կտրեց կլաւոցը.

Մուկը փիչօից խիտ վախեցաւ,

Մինը միւսին բռնեց, կերաւ.



Տաւարածի հրաժարականը.

Տեարոսը բարի ու քաջ տղայ էր: Նա հէնց մանկութիւնից սկսած իր հօր տաւարը պահում էր անտառներում ու դաշտերում: Նա ընկերներ էլ ու-



ներ, որոնց անչափ սիրումէր: Իր պապերից մնացած մի ժամագիրք ունէր ձեռքին և պարկումը դրած միշտ հետը ման էր ածում, երբեմն էլ սուտի—մուտի կարդալով ընկերներին ծիծաղեցնում... Այդպէսով կարդալու մեծ սէր ծնեց նորա մէջ և նա հրաժարական տուեց տաւարածութիւնից: Ընկերներն էլ ուզեցին նորան հետեւիլ, բայց տաւարը ինչպէս տնտէր թողնէին... Հրաժարական բոպէն քաղցր էր. ընկերները արտասպում էին...

Ընկերք, ես գնում եմ,
Մնացէք բարով սիրով.
այժմից հեռանում եմ,
Մնացէք բարով սիրով:

Հօրս տաւարը ձեզ
Սիրով յանձնում եմ ես.
Թողնում եմ այս անտառ,
Կանաչ մարգեր, ձոր ու սար ...

Սովորեցէք կովիլ —
Քաջ գազանների հետ,
Գործ ածեցէք հրացան,

— Ամէնուս էլ պահպան...

Իմացէք, մեր ծնողքը
Հեշտ չեն դատել ապրանքը.



Նրանց յոյսը դա է,
Սև պարսքերի տվողն է:

Դուք էլ շուտ բոյ արէք,
Դարձէք մեծ ու շատ կարիչ:
Տաւարած մնալով —
Մարդ չի դառնալ փրկիչ...

Ընկերք, ես գնում եմ,
Մնացէք բարով սիրով,
Ես գնում եմ կարդալ,
Գործունեայ մարդ դառնալ...



Հանելուկներ.

20. Ձեր տուն յաղթվեց, մեր տուն վերկացաւ:
21. Քեալը բղղաց, սկանջով ջուր խմեց,
Կովը յղի եկաւ, պոզերովը ծնեց:
22. Պուճուր տղայ, ձաթը ծոցու մը:
23. Մինը կը գնայ աշխարհք կը քանդի,
Յեա կը դառնայ տանը կը քնի:
24. Պղնձէ գդալ, ինքը անհալ, բերանն էրեց,




✓ Պառաւի մրմունջը:

Պառաւը նստած ճխարակ է մանում,
Եւ սիրտը լցուած դարձեր է յայտնում:

- » Մանի՛ ճխարակ,
- » Բզզա դու լիսեռ,
- » Պատրաստի վիլակ,
- » Տկտր ու անէէր,
- » Եթիմ երեխանցս
- » Դու ես կերակրում,
- » Շորեր հագցնում . . . «

- » Չէնդ ձենիս տուր,
- » Սիրտդ սրտիս բեր,
- » Էլ մի ճար չունեմ —
- » Դու ես իմ ընկեր:
- » Մանի՛ ճխարակ,
- » Հինի դու վիլակ . . . «

Մի սիրուն մանուկ էս դարձը լսեց,
Պառաւի որբին նա մի գիրք բաշխեց:



Հանելուկներ.

- 25. Մեռելը սաղին շահում է:
- 26. Անգը գնաց վնգվնգալէ,
Ճուտերը յետնից վսլալէ:
- 27. Մի սարից երկու կուլա կախ, ջրով լեզր:
- 28. Գիշերը դարձակվումէ, ցերեկը լցվում:



(Աշխատատէրը)

Ոչ ոչ անգործ չէ մնում: Սրջիւնն անգամ
գործ ունի և իր համար կերակուր է գտնում: Ա-
լարկոս մարդիկը գործի նշանակութիւնը չեն հաս-
կանում: Ասած է ով ալարի, ոչ գիլարի . . .

Ես էլ գործ ունեմ,
 Մի թոյլ էակ չեմ,
 Դու էլ գործ ունես,
 Ենդգայ մարդ չես:
 Մենք մեր գործերը
 Գնանք կատարել,

Մանուկն էլ դասերը


Աշխատի սովորել:

Եւ դու, անբան մարդ,

Ինչ ես մտածում,

Օրն անց է կենում—

Ընդործ ես մնում...



Հանելուկներ.

29. Տապանը փայտէ, մեռելը երկաթէ:

30. Քարը բարի վրա, տաւար չէ արածում է,

Հաւը թառի վրա, հաւ չէ՛ ձու է ածում:



Չին տարան...

Ամառնային գիշերներում գիւղացիք իրենց ձիանն ու եղները հանդ են դուրս տանում արտերի ու դորօղների միջակներում արածեցնելու: Թուրք զողերն էլ այդ բանը գիտեն և, մարաղ մտած կատուի պէս, սպասոււմէն թէ՛ երբ պէտք է ձի կամ եղը թուցնեն նրանցից:

Դորա համար էլ ասած է զողն ինչ կուզի մուծը գիշեր. բայց—

Այնպէս պարզ էր գիշերը

Եւ փայլում էր լուսինը,

Որ ասեղը կը թելուէր,

Եւ նորահարս կար կանէր:

Գիւղի մէջ խոր լուսթիւն

Տիրում էր այդ միջոցում.

Աշխատանքից դադարած՝

Մեր գիւղացիք էին բնած...

Յանկարծ մինը ձայն հանեց

Ակոսների միջակից.

»Տարան, հայ, տարան մեր ձին.

»Հասէք բոխվա՛ն, ձին փախցրին...»

Շները գիւղում զարթնեցին,

Դըրդոց— դալմադալ բցեցին.

Մինը մահակը շուտ առաւ,

Միւսը բաճն ու վազեցին:


»Եարա՛ք աղչի մեր սև ձին էր...»

—Չէ, աղչի, մեր տղէն ա նադան:

» Ինչ էք ասում, մէրը տարան,
 » Օրան կարած—ճարս տարան...»
 Երկրորդ օրը մի գիւղացի
 Չեռքը ծոցում ման էր գալի.
 » Ա՛ Չատ, ձիդ տարան եանի՞.
 — Հա՛, քեզ մատաղ, տարան էլի...

Պատասխանատուութիւն.

Պատասխանատուութիւնը բարոյական պարտք է: Քեզ հաշվով տալիս են, դու էլ պարտական ես հաշվով տալու: Հաշիւդ կորցրիր. անհաշիւ մարդ ես, ատելի կը դառնաս: Ինչ չափով տալիս են, այն չափով էլ պահանջում են: Վարժապետի դասախօսութիւնն էլ մի բարոյական հաշիւ է: Նո ինչ չափով տալիս է, այնպէս էլ պահանջումէ աշակերտներից:




Վարժապետը դասը խօսեց,
 Աշակերտաց նա խրատեց.
 » Հարա տեսնենք ինչպէս վաղը
 Դուք կը պատմէք այդ դասերը:

Վարժապետը դասը հարցրեց.
 Մինը միայն սիրուն պատմեց.
 Մի քանիսն էլ պակաս—պռաս,
 Քիչ մասն էլ ամաչեց շատ...
 Միք ծուլանալ, սիրուն տղերք,
 Չեր դասերը լաւ սովրեցէք.
 Անբաղդ կը մնայ այն ծոյլ տղան,
 Որ չի սովրիլ դասերն օրուան...

Հանելուկներ:

- 31. Պուճուր Աստուած, ձիւն է վեր ածում:
- 32. Պուճուր աէր, քիթը կէռ:
- 33. Գեղին դորձվում է, կարմիր կտրվում:
- 34. Մեզ կաթսայ ունինք կրակին դրած,

Նրա միջին քիչ դմակ կայ բցած.
 Կաթսան հալում է,
 Դմակը մնում է:



Որք կին.

Ամենքն էլ հարուստ չեն: Ով որ աշխատածի
 հետ խնայողաբար է վարվում, ապրուստի մէջ չա-

փառորութիւն գործ գնում, — հարուստը նա է: Բայց որբերը ինչպէս անին, որ աշխատող չ'ունին. հազիւ կարողանումեն իրանք իրանց զլուխը պահել: Օրինակ. Կաշտերում հունձ է ընկնում թէ չէ՝ կանայքն ու աղջիկները գնումեն մշակների յետևից վայր թափուած հասկերը ժողովում, փնջեր կազմում, ապա տուն տանում ու հասկերը թակիչով թափում են, զոյացած ցորենով էլ կառավարվում...

Այդպէս էլ երբ —

Մեր արտերը հասան, կձղեցին,

Մին — մնի վերայ ծվար արեցին.

Մանգաղներն էլ շուտ զնգզնգացին,

Հնձվորք հնձեցին, լաւ փէնջակեցին:

Բայց թողացին իրենց յետը —

Տեղ — տեղ վէր թափուած լիք — լիք հասկերը

Որ կամ ծխակը կրէր իր ձուտին,

Եւ կամ մի որբի լենէր նա բաժին...

Իրիկնադէմին եկաւ մի որբ կին՝

Շորերը հնացած և խեղճ ու անտէր.

Ժողովեց հասկեր, փնջիկներ շինեց,


Կոխեց իր պարկը և հաշիւ արեց:

»Է՛հ, շատ թէ քիչ Աստուծոյ տուածից

»Ես էլ ստացայ իմ մասն ու բաժին.

»Մէկ խօն սրանից՝ միւսն էլ անցածից

»Կը տամ իմ որդուս կարգալու գին...»



Հանելուկներ.

35. Հայրը չորս տարեկան էր,
Երեխան փողոցից զայլա էր:
36. Վարեմ ածար, բանի բանջար,
Շուշ տայ շմալ, բռնի կձու՞ծ:
37. Բարձրանամ — սարից ձէն տամ,
Մեռած մարդին — կենդանութիւն:

Օրիտ և ձուտեր.

Ոչինչ այնքան քաղցր ու մեծ չէ, որքան մայրական սէրը դէպի իր մանուկը: Կենդանիների մէջ էլ այդ սէրը կայ: Կովը իր հորթին անվնաս պահելու համար պողահարումէ: Շունը կատաղաբար յարձակվում է, երբ նորա լակոտներին ձուք ես տալիս: Թուխական հաւի ձուտերին ձուք տուր և կը տեսնես քեզ ի՞նչ կ'անի: Մի մօտենար օձի ձուտին, մայրը քեզ իսկոյն կը խայթէ, թէկուզ դու նորան յետոյ սպանես էլ...

Օրիտն էլ ունի մայրական սէր դէպի իր ձուտերը: —

✓ Նա թռաւ թռթռալէ,
Ղուտերը յետնից վսվսալէ,

Նա եկաւ ծղվլալէ,

Ղուտերը բնում ծղծղալէ:

Ծիտը կտցում բերեց ճատիկ,

Նրանք բաց արին իրանց կտցիկ.

Էսպէս երկու, երեք շաբաթ


Ղուտիկներին պաշեց նա շատ:

Ծոյլ մանուկը բունը բանդեց,

Եւ ճուտերին նա բռնոտեց.

Յանկարծ ծիտը եկաւ, տեսաւ,

Թփին կանգնեց ու լաց էլաւ:



Շուտասելուկներ

Մատղաշ մանուկի մատին մատանին սազ չէր գալիս:

Գրնկեց պառաւի գարին սուտ.

Մեղք ու վարձքը հազար փութ:

✓ Ինձ էլ, քեզ էլ:

Երկնքումը պարզ փայլում են

Լուսինն ու այն աստղերը.

Դուրսը երեխայք նայում են՝

Լուսինն ու այն աստղերը:

Տղան ձեռքին ունի մի գիրք,

Աստղալուսով նա ջոկում է.

Միւսը մեկնած ջուխտ ձեռքերը

Ցուցանում է՝ այն աստղերը:

» Իմն է այն փայլուն աստղը,

» Իսկ երկրորդը իմ եղբորը.

» Իայց իմ ազնիւ հօրն ու մօրը՝


» Լուսինն ու այն աստղերը: «

— Թող ձեզ լինի, իմ ընկենքը,

Լուսինն և այն աստղերը.

Իսկ ինձ լինին այն երկինքը

Եւ իմ գիրքը, և իմ գիրքը:



Հանելուկներ


38. Փայտէ ձի, մէկ միջնորդ:

39. Մտէ խնոցի, երկաթէ սիրէկ.

40. Հողէ տուն, մէկ դուռը:

Միպտակ դաշդ՝ գեղնն ծաղիկ մէջ տեղը:

41. Կտրումեմ՝ երկարում է, տաշումեմ՝ հաստանում է:



Առաջ կարդա.

Պատերազմի դաշտում քաջամարտիկ զորքը մեծ
 յաղթութիւններ արեց և յաղթութեան սուրբ դրո-
 շակը բարձրացրեց: Սարսափելի պատերազմի քաջա-
 վարժ և նժոյգ ձիաները յառաջ ու առաջ մղելով՝
 նոյնպէս ոտնաշարդ արին ընդդիմադրող թշնամուն:
 Բայց ամենքը կարող են արդեօք այդպէս վեհանձնա-
 կան ու դիւցազնական քաջութիւն ունենալ ..., իհար-
 կէ, ո՛չ:

Մարդիկն առաջ վարժվում — տարիներով սովո-
 րում են պատերազմել ապա հարկ եղածին պէս դորժ
 դնում: Ամեն մի մարդի սուրբ պարտականութիւնն
 է, որ այդպէս Ազգին ծառայի: Մանուկներն էլ,
 երբոր մեծանան, պէտք է ճանաչեն իրենց էլ, Ազ-
 գին էլ: Մեր ազգային, պատմական երկիրը Հայաս-
 տանն է, ընկած միանգամայն արիւնահեղ պատերազ-
 մի սարսափի տակ...


Երբ ձեր ուժեր մանկական
 Այս կեանքի մէջ զարգացան,
 Երբ ձեր կապեր բնութեան
 Արձակուեցան, բացուեցան,
 Չեր ծնողքը ձեզ հեռու

Պահեց սրից և զէնքից,
 Չեզ չը տվեց քաջ մարդու,
 Որ սովրէիք նորսնից—
 Միայն զէնքով քաջութիւն,
 Ջո՛ւր, անմեղ թափել արիւն—
 Թէ ծտերը որսալով,
 Թէ խեղճ գառնիկ սպանելով...

Երբ ձեր ուժեր մանկական
 Բնութեան մէջ զարգացան,
 Երբ ձեր լեզուք մայրական
 Թոթովել կարողացան,
 Չեր ծնողքը ձեզ միայն
 Ուղարկեց ուսումնարան,
 Դուք ունեցաք ոչ թէ զէնք,
 Այլ մի նոր այբբենարան...

Բայց երբ տարիք անցկացան,
 Չեր մտքերը բազմացան,
 Երբ ձեր խելքն ու միտքը
 Ուսումովը կոկվեցան,
 Երբ աղուամազ երեսին,

**Չեր կռներին երեցան,
Դուք ուսումով մեզ օգնեցիք,
Եւ մեր հողը յիշեցիք...**



Հանելուկներ.

- 42. Եինեկու կաուր, ճնվելու երեկայ, կանչեց թէ անվար արար կերան:
- 43. Երկար շմալ, շողք չունի:
- 44. Մեռածը շլակած, առողջը փաթաթուած:
- 45. Մինն ունենք, որ մորթենք՝ արիւն չունի, որ ջարդենք սակր չունի:
- 46. Բերան չունի՝ խօսումէ, ոտներ չունի՝ գնումէ:



Վարժապետ և ուսումնարան:

Մեր զիւրացի եղբայրները մինչև ներկայ ժամանակս ուսումնարան — բառի նշանակութիւնը լաւ չէին հասկանում, հիմի, որ ամեն տեղ էլ ուսումնարանի շունչը փչում է, կարծես զիւղացիքն էլ փոխվել են, էլ առաջվանը չեն. աշխատում են իրանց երեխաներին էլ ուսում տալ: Միայն մի բան: Երբոր

վարժապետը փող է պահանջում — իր աշխատանքի վարձը, նորանցից մեծ մասը չ'ունի թէ վճարի, դորանից անբաւականութիւններ են ծագում: Ար լաւ հասկանան ուսման նշանակութիւնը, հասկանան օգուտները, ինչքան էլ չունենան — չքաւոր լինին, դարձեալ կ'ապահովացնեն իրանց ուսումնարանին էլ, վարժապետին էլ... Բայց նրանք ուրիշ կերպ են մտածում: Ձեռքի պէտք է քաղաքներում մուհտա ուսումնարաններ լինեն, մուհտա կարգան նրանց երեկայքը իսկ մեր գիւղերում չը լինին... Եւ հա՛ նորանց խօսքը: Մի անգամ էլ —

**Մի վաժապետ գիւղը գնաց,
Շատ խրատեց ու քարոզեց.
Եւ վերջապէս նա մի հանգով
Ուսումնարան այնտեղ բացեց:**

**Երեք ամիս հազիւ տևեց,
Սաստիկ ձմրան ցուրտը փչեց.
Մանուկները այն սենեակում
Սառչում էին և ոչ կարգում...
Վարժապետը նեղանում էր,
Որովհետև նա անփորձ էր,
Բայց քահանան աղօթարար**

Ամենայն օր խրատում էր:

»Բերէք, որդիկ, ամեն մի օր

»Չեք տներից փայտի կտոր.»

Այսպէս տղայք սովորեցին

Միշտ փայտ բերել ու կարդացին:

Մտխաւս... վերջը յիմար քոխվան

Եւ շահասէր քանի մարդիկ

Ջուր քանդեցին ուսումնարան,

Բամբասելով վարժապետին:

Վարժապետը 'տխուր—տրտում

Սարսափելով դուրս էր դնում.

Իսկ տղայքը նորա յետնից


Արտավելով լալում էին...

Հատ տարիներ երբ անց կացան,

Նորանց ծնողք մեռան—կորան.

Գիւղի տղայքն էլ մեծացան,

Նոր բաց արին ուսումնարան...




Հանելուկներ.

47. Աստուծոյ տակին սին չի հասնիլ, քարափի

տակին ձին կը հասնի:

48. Երկու սաջ, մէկը հով, միւսը տաք:

49. Անջուր ջաղաց, անկրակ բաղաձ:



Ծուղ—րու—ղճ

Վետիս—Ապեր,

Լանթած ու պատուտած շորերիս ինձ
ես մտիկ տալիս, աղբրումը հաւաքված
հարսները ինձ են երանի տալիս, իմ խել-
քի ու քեամալի վրա հայիլ—մայիլ մնում...

Պարծենկոտ Մազոն ասեց, ծիծաղեց

Եւ քնակողով մէկ լաւ յօրանջեց.

Ազաղաղը թառին թւերը շարժեց,

Կմկմաց, չարացաւ և բարձր երգեց—

Ծուղ—րու—ղճ.

Տան նորահարսը էդ ձէնը լսեց,

Կամաց վերկացաւ, կրակը վառեց

Միբիչ փափսաց, յետոյ էլ փնթփնթաց

Ապա կուծն ուսեց ու ջուրը դնաց:

Զրիցը եկաւ դռները սրբեց,

Իլեկ ձեռքն առաւ, ապա թէլ մանեց...

Հուտասելուկներ:

Այս սիւնիս տակին մի նոթատուձ,

Այն սիւնի տակին մի ձիթատուձ,

վայ նոթատուձ,

վայ ձիթատուձ:

Ծափ բունը ծառի վրա,

Ծափ ձամբէն ջրի վրա,

վայ ծառուն,

վայ ծառջուր: (կրկնէլ)

Թիթեռ.

Թիթեռ, Թիթե'ռ, Թիթեռ մաղի,

Ասնաչ ծառի տերեւներին,

Գնա թռի՛ ալիւր մաղի.

Կրկին յետ եկ, մեր առաջին

Դու թռթռայ ջրի ափին,

Ըռանգ—ըռանգ թևիդ վրա

Սիրուն նկար թող երևայ.

Մին բարձր մին ցած թեթեռ մաղի,

Թէ ուզենք բռնել—մեզ էլ խաբի:

✓ Լուսին և Արև.

Լուսին տեսայ խիստ պայծառ,

Նա փայլում էր ինձ համար.

Եւ տեսնումեմ աստղեր վառ

Երկնքումը անհամար:

Բայց լուսինն անց կացաւ,

Սիրուն արև դուրս եկաւ:

Արև՛ արև՛ դու ինձ տուր

Հնորճք բարի ու միտք սուր:

Հանելուկներ.


- 50. Մինն ունենք տիճոր, ոտքերը չոր—չոր,
սախեն ձղած—ինքը գլխաբաց:
- 51. Սիպտակ օրա, դեղին քորա:



Մայր ու տղայ վարժապետի մօտ:

Գիւղերում բանը որ փափուկ սրտի տէր կանանց վերայ մնայ, կուզեն որ իրանց աղաներին միշտ գիր սովորացնել տան, ժամում փոխ ասել տան: Եկեղեցում տղային փոխ ասելիս տեսնելով, սիրտները վեր է թռչում, նախանձվում են և հառաչելով ձայն հանում—*ճախ, ա՛ բայա, էրնակ քու մօր աչքերին. նրա սիրտը մեր փորն ընկնի...*

Այս այսպէս է: Բայց գիւղերում կանայքը տղամարդոց հետ խօսելու իրաւունքն էլ չունեն. նորանց բերանը կապած է, լեզուն կտրած—չխօսկան. փոքր երեխայի միջնորդութիւնով կամ զանազան իշարաթներով են բան հասկացնում:



Դասախօսութիւնը սկսուած էր
Մի գիւղական ուսումնարանում.



Ե. վարժապետը սիրով պատմում էր

Այդ ժամի դասն ու հասկացնում:

Ուսումնարանի գաւիթում կանգնած՝

Տղայի ձեռքը մայրը բռնած էր,

Եւ աչքով—ունքով տայիս էր խնայ

Այն վարժապետին ու սպասում էր:

Վարժապետը դուրս եկաւ դասատանից

Եւ ամաչելով կինը մօտեցաւ.

Մեր չխօսկանը իշարաթ արեց,

Բայց մեր անփորձը բան չը հասկացաւ:

Այն ժամին յանկած տղայ էր անցնում,

Եկաւ աքոր մօտ ու շարժեց լեզուն.

Պէ՛ էն ա մօնթ ա, որ կարթացնես,

Պէ՛ սա ա ասում—փող էլ կը տամ քեզ:

—Քանի՞ օարեկան ես—վարպետը հարցրեց

Այն աշակերտից ու մի քիչ ժպտաց.

Քա՛հ, ես ՚ին գիտամ—երախան ասեց,

Նա խու տաւար չեմ—ան չորանի էծ:

—Ճշմարիտ է, դու ոչ էծ ես, ոչ տաւար,

Այժմից կ'իմանաս տարուանդ համար:

Այդ սէրը նորա երբ մայրը լսեց

Երեսի քողը փոքր յետ քաշեց:


Ի՛մ երեխէն ա, լա՛ւ կարդացրու,

Տարին ես ուզում—կեռիքին մտիկ տա՛ւ.

Թե՛ հաւատում ես—ուրթ տարեկան ա,

Պիտուկը շուռ տամ—լիզու քու դուն ա:

**Տղէրք, կարդացէք զուք մտածելով,
 Եւ ձեր ծնողաց շատ—շատ պատուելով։
 Բայց երբ մեծանաք, լինէք քաջ բարի,
 Ո՛հ չը մոռանաք մեր Ազգ խղճայի...**



Հանելուկներ.

- 52. Պապը սարումը՝ ոտները կրակումը:
- 53. Երկու սոված դադան ձորումը մնչում,
 Աշխարհք են ուտում—աշխարհք պահում...:
- 54. Սև եզր որ չլին՝ք չուլն է վեր քցում,
 Որ չենք չլում—հորթն է վեր քցում:

Բարի վարժապետ և ծնողք:

Տան մէջ էլ, ուսումնարանումն էլ վարժապետեր կան: Տան վարժապետը—ծնողքն են: Ծնողքի պարտականութիւնը շատ մեծ է դէպի իր երեխան: Նա պահում է երեխային, մեծացնում է, ամեն տեսակ փորձանքներից ազատում է. մի ազից թիբայ որ ճարում է՝ իր բերանից կտրում—նորան է ուտեցնում: Ծնողքը միշտ սովորացնում է երեխային բարութիւն, խրատում է միշտ աշխատասէր լինի նա: Այդպիսով

Ծնողքը պատրաստում է երեխային ուսումնարանի համար: Սորա համար էլ ասում են—տառջին վարժապետը ծնողքն է տան մէջ. երկրորդը՝ ուսումնարանի վարժապետը: Մինը միւսի հետ մեծ կապ ունի: Կեանքի փորձերն էլ վարժապետ են. ուրիշի անկարգ զործերը տեսար, դու կարգաւորութիւն սովորիր: Թէ տան թէ ուսումնարանի վարժապետերից ով որ իր պարտականութիւնը լրիւ և խղճմտաբար չէ կատարում, այնպիսի շատ երեխաների քամբալղութեան պատճառ է դառնում...:



**Ի՛նչ է հարկաւոր՝ որ լինենք բարի,
 Պէտք է լաւ հօրն ու մօր լինենք մենք որդի:
 Ի՛նչպէս է պահում ծնողքը իր որդուն:
 Սովորեցնում է նրան բարութիւն:
 Բայց վարժապետը: Նա է երկրորդը,
 Որ կտտարում է ծնողքի գործը:
 Լաւ վարժապետը, բարի ծնողքը
 Մարդիկ են խրատում—որ սիրեն Ազգը:
 Վարժապետ գիտուն և ծնողք սիրուն
 Դեռ ունենք շատ քիչ՝որ լինեն փրկիչ:**



Շուտասելուկ.

Զոկ—ապեր, եթէ այդ գոյգ փայտը կորես,
Ես քեզ կ'ատեմ—գոյգ փայտ կտրող **Զոկ**—ապեր: (կրկնել)

Թռչուններ:

Սա ծխտիկ է խիստ ծլվլուն,
Նա մոշահաւ երգող թաքուն,
Երկուսին էլ որս են անում,
Բմբուլը պահում—միսն էլ ուտում:
Սորան կը տան քաշ անունը,
Նորա յետնից սև դուզդունը,
Ս.յդ երկունս էլ լէշակեր են,
Մեր թուխսերի ճուտ կրողն են:
Ահա սիպտակ, ճերմակ սագը,
Եւ իր ընկեր թուխ օրդակը.
Ինչ սիրուն են սրանք մանգալիս,
Գեղեցիկ են ջրում լողալիս:
Ս.յդ բոլորն էլ մեզ ինչ պէտք են,
Վնասումն թէ օգուտ են:

Էլ ինչ գետեք՝ որ ուտեն կուտ,
Ով կարող է ասել շատ շուտ:

Հանելուկներ.

- 55. **Սև եղբ չեմ, չուն ուտեմ:**
- 56. **Զուկից փոքր, ուղտից մեծ:**
- 57. **Էստեղ կուացաւ, Սրտքսից ջուր խմեց:**
- 58. **Սև սիլեկը վեր ելաւ, անհամբարբը վեր եկաւ:**



Եղբօր նախանձը.

Ամեն մարդ պէտք է աշխատի բարի նախանձ պահպանելու իր սրտի մէջ: Ես նախանձվումեմ մէկի քաջութեան, երկրորդի համեստութեան, երրորդի աշխատասիրութեան, չորրորդի զիտութեան (ևն). վե՞րայ և հետևումեմ նորանց օրինակին. այսինքն՝ ինքս էլ լինել քաջ, համեստ, աշխատասէր, զիտնական ևն: Եղբայրը նախանձվում է եղբօր վերայ և ասում. «Ինչի՞ հարիկս քեզ շատ է սիրում», որպէս թէ ամեն տարի դարոց ուղարկում. զգո՞րծ զայս

»Ինչե՞ք քեզ համար նա փող է ծախսում,
 »Շատ զրքեր առնում, միշտ կարդացնում...»
 —Որ ես ուսումնով կրթվեմ, զարգանամ,
 կարի՞ճ մարդ դառնամ—ծնողքիս օգնական.
 Եւ բարերարիս բարիքն խմանամ,
 Եւ չը մոռանամ խղճուկ հայաստան...

»Ինչե՞ք մայրիկս քեզ է շատ սիրում.
 »Եւ կաթնի, մածնի սերն ուտեցնում:»
 —Որովհետեւ դու դեռ ևս փոքր ես,
 Ազատ խաղալու ժամանակ ունես...

Խաղալու փազեց տհաս մեր Տիգրան,
 Զայրմայրը յիշեց նորից Հայաստան...




Ո՞վ է զուրկ ինչից:

Մարդիկը միանման գրութեան մէջ չեն: Մինը հարուստ է, միւսը աղքատ, մինը աղա է, միւսը ծառայ. մինը մտքով կոյր է, միւսը աչքերով. մինը կաղ է, միւսը լալիկ: Այսպէս, մտղիութեան մէջ մեծ անհաւասարալիչութիւն կայ: Գիտնականը լաւ է ապրում, որովհետեւ կեանքի ապրուստի ճանապարհները հասկանում է. ծառան ծառայութիւն է

անում—ուրիշ բանի շնորհք չունի: Կոյրերը, կաղերը, լալիկներն էլ դռնէ դուռը ուզողութիւն են անում...
 ❖❖❖❖❖

Լեզուով խօսումեն Արամի մասին,
 Աչքով նայում են ամենի գործին,
 Ականջով լսում ինչ որ խօսեցին
 Եւ ձեռքով—ուրքով ինչ կատարեցին:
 Բայց մեր անբաղդը զուրկ է խօսելուց
 Զուրկ է նոյնպէս լսողութիւնից.
 Ամենի գործը աչքով տեսնում է,
 Եւ իր կրքերին ուղեղ իշխում չէ:
 Իսկ միւս անբաղդը աչքերից է զուրկ,
 Թէ և ունի խելք, սիրով առատ տուրք.
 Միւսն էլ ինչքան խեղճ է և թշուառ,
 Որ մայրն է մուրում հաց նորա համար...



Հանելուկներ.

59. Փայտէ ոտնաւոր, էծերը գլխավեր արա,


- 60. Քնթի, քնթի, ուրիշ ներքև արա:
- 61. Երկու կենդանի, մէկը սև, միւսը սիպտակ:



Թոռան յիշողութիւնը.

Պատուիր ծէրին, որ ծերանաս: Կը ծերանաս,
ծէրի պատիւը կ'իմանաս:


Երբ որ մեր պապը քաջ ու ջահիլ էր,
Նա մեր տան համար շատ աշխատում էր
Իմ հօրը խրատում—ինձ էլ սիրում էր,
Գիւղումը խօսող—ասող բոխվան էր:
Բայց հիմի ծէր է, մազերը սիպտակ,
Իշ աշխատելու չունի ժամանակ,
Հազիւ կարում է կերակուր ուտել,
Ամենի համար միշտ աղօթք անել:
Այ իմ ծեր պապի ես էլ պատրաստեմ
Քեզ միշտ հնազանդ և անչափ պատուել.
Դու ինձ համար էլ աղօթքիդ միջում
Խնդրիր տիրոջից՝ որ տայ ինձ ուսում...



Համեմատութիւն

(Գիւղացին քաղաքացու հետ)

Մեծ դանազանութիւն կայ գիւղացու և քաղաքացու երեխաների մէջ: Ճշմարիտ է, նորանք—երկուսն էլ բան սովորելու ընդունակ են. բայց գիւղացու երեխան գերազանցում է: Սորանք իրենց հօր տանը տեսած են նեղութիւններ էլ, ուրախութիւններ էլ. ազատ մեծանումն բնութեան մէջ, միանգամայն յանձնվելով նախախնամութեան կամքին: Նորանք դաշտերում, ձորերում կեանք անցկացնելով և ֆնալով բնութեան բազմակերպ երևոյթների ազդեցութեան տակ, մեծ ընդունակութիւն և ձիրք են ստանում: Այն ինչ՝ քաղաքացի երեխաները կեանքի մէջ փակուած՝ շրջակայ հանդամանքների մէջ շուայլութիւնների են ընտելանում և տարօրինակ երևոյթներ տեսնում...



Մինի ոտքին կան տրէխներ,
Միւսը ունի լաւ չաքմաներ,
Տրխաւորը լաւ է կարդում,
Չաքմաւորը միշտ ծոյլ մնում:
Քաղաքացին լաւ շոր ունի,

Մեր գիւղացիքն ոչինչ չունի.

Սա կարդում է հին շորերում,

Նա խաղում է փողոցներում:

Մեր երեխան սիրով կարդում,

Հատ սիրով էլ չոր հաց ուտում.

Քաղքի տղէն կուշտ—կուշտ ուտում,

Բայց իր դասը լաւ չէ սովորում...



Հանելուկներ.

62. Մի կենդանի կայ, զոռում է առիւծից՝ զօրեղ,
ձէնից կրակ է թափվում:

63. Յերկը աղա, զիշերը ծառայ:

64. Սև եզը վեր բնկաւ, դանակաւորը շատացաւ:

65. Պոչը մկրատ, զլուխը սկողին, փորատակը ոչխար,
մէջքը էծ:



Հատ է բզարել.

Մեր մէջ ընտանիքներում աղջիկները մինչև այժմ միակերպ կեանքի մէջ էին: Նորանք տանը—չորս պատերի մէջ էին մեծանում: Այժմ այդ պրու-

թիւնից մի փոքր ազատ են քաղաքներում: Իսկ զիւղերում դարձեալ նոյնն է: Մինչև անգամ աղջկան կարդացնել տալը ամօթանք է համարվում—և նա խատում են կարդացնել տվողին: «Բա ամօթ չի՞ աղջիկը վարդապետ ու տէրտէր խու չը պէտք է դառնայ:» Եւ այդ երևոյթը վերաբերում են ժամանակիս շարութեան ..



» Ինչի՞, Հայկանուշ, սիրելի քոյրիկ,

» Դու էլ չես կարդում այս գիրքը փոքրիկ.

» Ինչի՞ ամեն օր դու տանն ես մնում,

» Եւ քեզ վարժարան էլ չեն ուղարկում:

—Սխ, մայրիկս ինձ չէ կարդացնում,
Աղջկան կարդալը վատ է համարում.
Բայց ես ամեն օր ուզումեմ փախչել.
Տանը մնալուց շատ եմ բզարել..



✓ **Համեմատութիւն:**

Մեր աղջիկը ունի ձեռքին

Սրածէր իւրի՛ կազ է մանում,
 Նա այդ թէլից տրխատէններ,
 Գոյն—գոյն գործուածք է պատրաստում:
 Չեր աղջիկն է շատ ալարկոտ,
 Թէ և ունի սիրուն ձեռք, ոտ,
 Նա աշխատանք չի էլ սիրում,
 Եւ ամօթանք է այդ համարում:
 Մեր աղջիկը չորեր ունի
 Հատ հասարակ, շատ սիրելի,
 Չեր աղջիկը օրիորդ է
 Մորա սիրող—և շատ խորթէ:



Հուտասելուկ.

Բարի կենդանի է շերը կենդան, մեծ—մեծ տներ,
 սոված շներ:
 Մեր բազումը մի մարդ, ոտը շաղումը մարդ,
 վեր կաց, գնան, արխը կապիր, նստիր, չարսը չափիր,
 շուտ արան, ջանդ թափիր:
 Ամիրջան, կոտրած փնջան, դառի զափան,
 գէլե թափան:



70 ✓ **Տղան արհամարհում է.**

»Մարիկ, ինձ ասա, ինչի՞ չէ կարողում
 »Մեր Սաթիւիկը և տանն է մնում:

—Մժօթ է, որդի, որ նա գիրք կարդա,
 Աղջիկը պէտք է միշտ տանը մնա:

»Մայրիկ, սխալ է, ես շատ եմ տեսնում
 »Աղջիկներ ճանբին՝ Դպրոց են գնում:

Քոյրը լսում էր միշտ խօսքը եղբօր,
 Եւ ընդ դէմ կենալ չէր կարող հօրն ու մօր:



Հուտասելուկներ.

Մեր տան փայլ—ամենքը իրանց տուն,
 Չեր տան փայլ—չալ կատուն հէրանց տուն,
 —իրանց տուն,
 Հէրանց տուն: (կրկնել)

Ընութիւններ.

Տունը կնոջն է,	Սար են դուրս գնում,
Գուրբը մարդինն է:	Կօհայներ շինում.
Եւ սպաներին —	Սիրուն տախտերում.
Ուսումնարանն է:	Բիւնէք են քցում:
Սրահն ոչ ովին —	Սյուզ հնձանում
Գոմն էլ տաւարին.	Խաղող են մզում,
Եւ ոչխարները —	Իսկ մեր մառանում
Ոչխարանոցին:	Լաւ միրգ են պահում:
Տարման են ածում	Սասուճոյ տաճարը
Մեր մարաքներում.	Եկեղեցին է.
Դեղեր են կալսում	Եւ նորա կողքին
Մարդիկ կալերում:	Չանգակատունն է:
Ել ով կարդ է	
Սնել ուրիշ բան.	
Մարդը ինչին է	
Ստում — խոզաբան:	



Հանելուկներ

- 66. Մի ծառ, ծառի վերա մի կալ կալի վրա հինգ տալ, ամեն տալին մի մի սալ:
- 67. Եօթը գաղանոց հոր, ծէրին մի կարմիր խնձոր:
- 68. Ալալա — վալալա, տար խաղ արա, բեր կախ արա:
- 69. Կտաւ գլխով տամ — մոլա չեմ, ծուխ անեմ — համամ չեմ, կիկվամ — կաքաւ չեմ:

70 Էս. կողմը սար, էն կողմը սհար, միջին գիւլ — բհար:

Վրէստաւորներ և գործիքներ:


Հիւսնը ունի ձեռքին մի զաղ,
 Նորա գործն է փայտ տաշելը,
 Որմնաղիրը թոխմախ ու մուրճ,
 Սորա գործն է քար կոփելը:

Կոշկակարը բիզը ձեռքին,
 Չափչփելով կոշիկ կարում.
 Ներկարարը լաւ ուստա է,
 Ըռանդ — ըռանդ թէլ է ներկում:

Վարժապետը դաս է խօսում,
 Տղաներին կարգադնում.
 Մեր տէրտէրը ժամ է ասում,
 Եւ անդադար աղօթք անում:

Ահա այնտեղ վաճառական —
 Իր արշինով ձոթ է չափում:
 Իսկ անտառում անկախ որսկան
 Սրճակում է իր լեք հրացան:
 Սա հարուստ է, մի հաստափոր,
 Ունի մեծ զանձ և սար ու ձոր.
 Նա էլ մարդ է, բայց մութացկան.
 Բաղդիցը միշտ հալածական...

Երկրագործը զիւղացին է,
 Աստուած նորան միշտ տալիս է,
 Այգեգործի ձեռքում ցաքհատ,
 Պատրաստում է գինի առատ:



Հուտասելուկներ:

Մեր տան տաշած տապան ճապկէ տաճակ,
 Ձեր տան տաշած տապան ճապկէ տաճակ,
 Վայ մեր տան տաշած տապան ճապկէ տաճակ,
 Վայ ձեր տան տաշած տապան ճապկէ տաճակ: (կրկնել)

Արև և լուսին

(Քոյր ու Եղբայր.)

Մեր մէջ պապական աւանդութիւններ բերան —
 բերան ընկնելով շարունակվում են: Առհասարակ հա-
 յերը, պատմական Ազգ լինելով, շատ են սիրում
 աւանդութիւններ և դորա համար էլ մեր մէջ շատ
 են մնացած: Ամեն մի նշանաւոր անցքերի, երևելի
 մարդիկների և այլ ջնաչխարիկ բաների վերայ մեր
 նախնիքը աւանդութիւններ են թողել: Արեգակի և
 լուսնի վերայ էլ կայ ասումն — նրանք քոյր ու

»Աղբէրս են: Եւ սկզբում՝ քանի որ աշխարհքը դեռ
 նոր էր պատրաստվում — եղբայրը քրոջն ասում է
 »Արև՛, իմ քոյրիկ, լոյս տուր գիշերը,
 »Թէ ամաչում ես լոյս տալ պարզ օրը:«

— Ո՛չ, Լուսին եղբայր, ես վախենում եմ,
 Գիշերը շրջել — լոյս տալ կարող չեմ:

»Ցերեկը շրջի՛ր, կը տամ ասեղ քեզ,
 »Որ մարդ կը նայի — աչքերը կ'ածես:«


Այն օրից արդէն աննման քոյրը
 Տալիս է երկրին տաք, փայլուն օրեր.

Իսկ գիշերները աստղեր անհամար
 Լուսին եղբօր հետ փայլում են պայծառ:




Օղբ ձրի է:

Եթէ օդն էլ փողով առնէինք և ասպա շնչէինք,
 այն ժամանակ ինչ կը լինէր արարածներիս հայր:
 Աստուծուն փառք, որ նա այդ ամենազլխաւոր կեն-
 սատու աղբիւրը ողջ արարածներիս ձրի է բա-
 ժանում...



Հարուստները միշտ ուտում են
 Սիպտակ, փափուկ—տաք ցորնաչաց,
 Աղքատները միայն ճարումեն,
 Իրենց համար չոր գարեչաց:

Աղբերների պարզ ջրերից
 Ուտողները միշտ խմում են,
 Հարուստ, աղքատ, իշխան և մեծ
 Այդ մի կողմից շատ դարդ չ'ունեն:
 Այդ երկուսիցն էլ մեր կեանքում
 Մարդս—ինքն է միայն ճարում,
 Բայց կայ մի բան—որ նա ձրի է,
 Կեանք է պաշում—դա օղն է:



✓ Ուտումը թանկ է:

Արհեստը լաւ է, եթէ մարդ գիտէ,
 Բայց մեր ուտումը ամենից թանկ է:
 Մարդիկն արհեստով իրենց են պաշում
 Բայց ուտումովը Ազգ էլ պաշպանում:

Արհեստ և ուտում—փոքրից պիտ' սովորեն
 Որ վերջն էլ անբաղդ մարդիկ չը լինեն...

Հանելուկներ


- 71. Մինը կայ, որ վերցնենք—լաց կը լինի, որ վեր-
 դնենք—տուս կանի:
- 72. Կապեմ՝ ման կը գայ, եզ անեմ՝ կը նսաի:
- 73. Փոքր երեխայ՝ հորի մէջ ձէն ա ածում:
- 74. Կը բռնեմ հափուովս մին, բաց կը թողնեմ
 —տանովս մին:
- 75. Արաբը չոքեց, երեխաները ուրախացան:



✓ Հայկը Արամին.

Ես շատ եմ սիրում մեր այգին գնալ,
 Մարգերից գոյն գոյն ծաղիկներ պոկ տալ.
 Կորանից սիրուն փնջիկներ կաղմել,
 Ապա սուրբ սիրով ծնողքիս նուիրել:
 Դորանից յետոյ գրքերս վերցնել:

Եւ ինձ պատուիրած դասերը սովորել.
 Ինձ համար ոչինչ դժուար չէ այնքան,
 Շուտով եմ սովորում դասերս օրուան:
 Ե՛կ դու էլ սովորի, սիրելի՛ Արամ,
 Եւ ընկեր դառնանք այսպէս միանգամ.
 Վաղը շուտ գնանք մենք ուսումնարան,
 Ճաշից յետ վազենք այգին սիրական...



Շուտասելուկներ

Լ առ ա—լ առ ա լ առ ն եմ, խոսա խոսիլ—հեա
 խառնեմ, հեռվից մտիկ տաս, հէնց կիմանաս՝ կար-
 միր ու ալ խնձառն եմ:

Ես աղա, դու աղա, մեր աղունն ո՛վ աղա: (Ամենքս)




Ափսոս է:

Ինչե՞ պէտք է մարդ սպանի մի այնպիսի կեն-
 դանու, որ իրեն ոչինչ վնաս չէր տալի: Օրինակ. ինչե՞
 պէտք է ծիծեռնակին սպանել, քանի որ նա էլ
 Աստուծոյ ստեղծած է, աշխարհքի երեսին ապրումէ:

Լ առ է, որ որսորդը հրացանը լցրած խեղճ նապաս-
 տակի յետևիցն է ընկել և նորա բռնաբաշ տղէն
 էլ ուրախ—ուրախ ասում է՝

- » Հ ա՛, Հ ա՛, Հ ա՛, նապաստակ,
- » Մ ի ըրպէ՛ ժամանակ.
- » Ք եզ տուեց մեր որսկան,
- » Ք եզ խափեց հրացան:
- » Շ ուտով դու վեր կ'ընկնես,
- » Երբ կը դիպչի քեզ գնդակ.
- » Ջ ա՛ն, ջ ա՛ն, կը լինիս,
- » Մ եզ համար համեղ միս...



Նա ո՛վ է.


Ծառի տակեցը մի ինչ որ ձէն էր գալիս. մինը
 ինքն—իրան մրմնջում էր: Անցուորական լսողները
 սկզբում շփոթվեցին, բայց յետոյ տեսան որ—

Ծառի տակին անասա նստած՝
 Խորհրդաւոր զիրքը բացած՝
 Արի տղէն դասն էր սերտում
 Եւ ոչ որքի նա չէր նայում...

Գործը պաճաւ, դասը սովորեց,
 Եւ աջ ու ձախ նա յետ նայեց.
 »Այժմ մի փոքր ես զբոսնեմ,
 »Կանաչներին մօտիկ անեմ...»

Շուտասելուկ.

Չուկ քցեմ ձուկ կուլ տամ.
 Մուկ քցեմ ձուկ կուլ տամ... (կրկնել)



Խնդիր.

»Տրգատ, ասաց քոյրիկը,
 »Դու քանի՞ տարեկան ես:
 — Մեր Տիգրանի տարիքը
 Լաւ համարիր, կը գտնես:

»Տիգրանը այնքան մեծ չէ,
 »Դժուար չէ այդ խննայ:
 »Նա տասնամեկից շատ չէ,
 »Չի տարիքն են հաւասար:
 »Հա՛, հա՛, հա՛ — ծիծաղելով
 Ասաց մեր Հայկանուշը.
 »Վամեցար դու խոսիս տալով
 »Ինձ դուր սխալեցնես:

Հանելուկներ.


76. Մինն ունենք, պուճախատակերը լպտտում է,
 էլի գալիս — միակին (դրան տակին) վէր ընկնում:
 77. Լուն տրաքեց, լեդրը քցեց:
 78. Ո՞վ է երեկոյ — առաւոտ զիւղամիջում ճղճղում:
 79. Կթոցը ճանճով լցուեց, ճանճի մեծը տղտղաց:

Այդ սիրով կը յիշես.

»Շարձ ջան շարձ.
 »Ինչդրեմ ինձ ասա՛,
 »Եօթը տարուց յետ —
 »Ո՞վ մեծ կը դառնայ:

Եօթը տարուց յետ
 Երկու տարի էլ յայ
 Ես մեծ կը լինիմ —
 Կունենամ սուրբ սէր:


»Սուրբ սէր կ'ունենաս,
 »Եղբայր սիրական.
 »Բայց երբ այդ սիրով
 Կը յիշես Հայաստան...



Ո՛վ է ուղիղ:

Ուրիշ անդիտութեան վերայ լաւ չէ որ ծիծաղումես. եթէ դու զիտես և կարող ես, սովորեցրու ինչ որ նա չը զիտէ: Նա եթէ այժմ չի ուզում սովորել, ապա կը գայ մի օր — երբ աշխարհքը կը ծիծաղի նորա վերայ...

- » Արշակ, դու ծիծաղում ես,
 - » Երբ քեզ հետ խօսումեմ ես:
 - » Եւր լաւ բան չէ, զգո՛յշ կաց,
 - » Ծիծաղդ մի օր կը լինի լաց:
- Ես ծիծաղո՛ւմ եմ, վարդան,
 Որ դու այդքան անբան ես,
 Դեռ անունը Հայաստան
 Երևում է լսած չես:



Մէր ու տղայ.

(Սերի մասին)

Մէրը երկու տղա ունի,



Երկու տղան մի մէր:—

Եզիպը ո՞րն է:

- » Մայրիկ, մայրիկ, ինձ ասա՛,
- » Հայրիկս է շատ սիրում:
- » Թէ դու ինձ — խնդրեմ ասա՛
- » Այդ իմանալ եմ ուզում:
- Ես չեմ ասիլ, իմ Զայրմայր,
- » Թէ ո՞վ է քեզ շատ սիրում:
- » Բայց դու ասա՛ մեզ համար ազո՛յ:
- » Թէ որի՞ն ես շատ ուզում:
- » Երկուսիդ էլ հաւասար
- » Ես սիրումեմ հոգով չափ.
- » Բայց իմ մայրիկ — ես խոնարհ
- » Սիրումեմ քեզ շատ, անչափ...



Հանելուկներ.

- 80. Անձրևը վշտաց, կտուրները թխթխկաց:
- 81. Մի թորոն — սողով լիքը:
- 82. Էստեղ պուպուզ, էստեղ պուպուզ, յիմար, ախմախ, քանի՞ պուպուզ:
- 83. Առանց երկիկ տուն, մարդը միջին քուն:

84. վարդը զհարկը դուրս եկաւ,
Աշխարհքն ուրախացաւ:



Հնձվորների մասին.

Ամբ ծանրացել է, էլ չի կարողանում շատ բարձրանայ: Բնութեան ցուրտ մասի իշխանի — սառնութեան ազդեցութեան տակ նատար ու բերվում է, գոռում է: Նորա ջրային աննշմարելի մասերը, որ գոլորշու հետ ՚ի միասին բարձրացել էր երկրիս երեսի ծովերից, գետերից, լճերից, առուակներից ու խոնառութիւնից, այժմ կաթիլների փոսկելով քամու ուղղութեամբ կաթկաթումեն... Ահա վարարեց անձրևը.

- Ահա խաղաց ծովինարը,
- Դորա հետ էլ գոռաց ամբը.
- Դաշտում մշակ մարդիկները
- Վայր գրեցին մանգաղները:
- Բայց յանկարծ գոռալն սկսեց,
- Հնձվորներին շկալացրեց:
- Տես, քամին փչեց անձրևը

Եւելի և աւելի վարարեց,
Կծղած արտը լիք հասկերով
Երկիւղեց խիտ տատանվեց:

Եւ յանկարծ մի պինդ գոռոց
Հնձվորներին շկլացրեց:
Տէր—ողորմեա—մինն ասելով
Երեսին շուտ խաչ քաշեց,
Միւս ընկերը գողգողալով
Խրձան տակին պըպըզեց:
Բայց յանկարծ արև ծագեց,
Հնձվորներին նոր սիրտ տուեց...




(Նմանութիւն)

Ես էլ եմ ուտում, ծիտն էլ է ուտում,
Ես էլ եմ խմում, ծիտն էլ է խմում:
Ես մտն եմ զայնս, ծիտը թռչում է.
Ես շորեր ունեմ, նրանք թեկու ու է:
Ես էլ խելք ունեմ, ծիտին էլ զուրկ չեմ,
Թշնամունդ իտի և շուտ կը փախչեմ.
Ես քանի փոքր եմ— ծնողքս են պահում,
Լխողը ձուտիկին մայրն է կերակրում:

Ինձ ուսումնարան էլ են ուղարկում,
 Լիտոր ձուտիկին թուշել սովրացնում:
 Հարա ուրեմն, ի՞նչո՞վ եմ ես գեռ
 Բարձր նորանից—իրաւունքի տէր.
 Որ լիզու ունեմ՝ ու սիրուն խօսում,
 Ի՞նչ, ծիտիկն էլ լաւ է ծրվում..

Ինչի՞ ծիտիկը չի կարում խօսալը
 Եւ տղան էլ չի կարում ծլվլալ..



Հանելուկներ.

- 85. Մտէ աղուխ, մտով լեքը:
- 86. Մի որձակ կայ, բերան չունի սորտովը կուտ է ուտում, աջ ու ձախ գուրս ածում:
- 87. Զորանը սարումը, ոչխարը պարկումը, ձուտերը փորումը:
- 88. Զրանգի աղբուր, զրանգի զոռակը երեսին:

Ագահն ու ժլատը.

Ագահը լսեց՝ որ կայ մի ուրիշ

Եւելի ագասի, աւելի ժլատ,
 »Պնամ, մի տեսնեմ ո՞վ է այն մարդը,
 »Որ խիստ ագահ է և ժլատ է շատ:

Այսպէս մտածեց անկուշտ ագահը
 Եւ ճամբաւ ընկաւ դէպ'իր ընկերը:
 Մթնագիշեր էր, երբ տունը մտաւ
 Եւ անծանօթին նա դուրս տվաւ:

- »Բարով, բարեկամ, դու ե՞ս տան տէրը,
- »Լաւ համարեցի քեզ ճանաչելը.
- »Այժմ երեսօք տեսայ, ուրախացայ,
- »Մօմը ափսոս է, թող ճրագը հանգցնենք,
 »Մթնումը խօսենք.»

— Բարեկամ, իմ հիւր, ագահ չեմ այնքան,
 Որքան լսել ես, — լոյս է հարկաւոր.
 Բարի ագահը այսպէս սուր խօսեց,
 Եւ ժլատ հիւրը գովքով ծիծաղեց:

»Ես շատ զարմացայ—որ ինձ ասացին,
 —Քեզնից աւելի ագահներ կը լինին...
 Այս մարդիկներից մենք էլ շատ չ'ունենք,
 Լաւ չէ, որ նորանց մենք էլ հետեւենք:

Շուտասերուկներ:

Օխոր պարի, օխոր պարիին օխոր պարի ու
կապիչ:

Իեզոյ դզան — դէզը տարան, զնացէք գէղամօրն
ասեցէք, — գայ դզան դէզը դզան դէզիցը հանի:

Պարոն պիտի բունի, խաթուն պիտի կթի, խնոցին
ածի, հարի:



✓ Գիւղացու պարապմունքները:

Գարունը եկաւ. հողը փափկացաւ.
Եւ ութ լծնանի գութանը պատրաստի
ճլվստոցն ընկաւ, ախ ու վախը կորաւ:

Առաջ մաճկալը
Բացեց բերանը.

» Առաւել ձեզ ղուրբան.

» Ակոսդ էսօրվան ա բիմբի.

» Ոսկու ա նման...

» Չան տվէք մատաղ,

» Ակոսին սաղաղ,

» Ինք ցեխ անենք:

» Շտու ծուն բաշխենք:

» Առաւել ձեզ ղուրբան.

» Ոսկու ա նման...

Ամառը հասաւ. գիւղացին տեսաւ
Մի օր իր ցելը — բաց արեց սէրը.

Եջ ու ձախ նայեց
Ու բարակ երգեց:

» Ես քեզ վարեցի,

» Միջումդ քանի՛

» Գութան կոտրեցի.

» Թէ որ քեզ ցանեմ —

» Աամագս յետ կը տամ,


» Թէ որ քեզ սերմեմ

» Սերմն յետ կը տամ...

» Ո՛վ Աստուած վերև,

» Դրո՛ւտ ա սիրտս,

»Տուր ցելես արև,
»Շատ ու շատ անձրև... ..



Պարտքատէր,

Կալի մէջ մաքուր

Յորենն է թեղ տուած,

Եւ մի հաստափոր

Կողքին է կանգնած:

»Ռէ չափենք, Հանէս,

»Յորեն շատ ունես,

»Հինգ թաղար թէ վեց

»Չէ՞ որ ինձ պարտ ես...

—Աղա՛ ջան, պարտ եմ,

Թող սերմն վերցնեմ,

Մնացածը քեզ տամ,

Հողիս ազատեմ.....



Հանելուկներ.

- 89. Պուճուր տէր, բիծը կէս, թէ չը գիտես, իրան կեր:
- 90. Գունդս միջին տամ, գողանամ ու դուրս բերեմ, շատ տեսակ բաժանեմ:
- 91. Տակին պահ տամ, զլխիցը կտրեմ:
- 92. Փորս փորից, կոթ դձուխ, վրա հարեմ—կռկռաս:
- 93. Բաց արած զուժիկ, ծուփ քցած:
- 94. Մինը կայ՝ ու շուն է թէ հաչի, ոչ մարդ է թէ խօսի, որ գողը գայ՝—դուռը կը պահի:

Գիւղացու պարապմունքները.

Նշունքը եկաւ,

Շուք—բուքը անցաւ.

Արօրն ու ցաքանը

Հաղիւր կան դրանը.

Միմիանցով դիպան,

Սերմը դուրս տարան.

Գիւղացին չթեց,

Իր ցելը սերմեց.

Բերանը բացեց —

Երկու խօսք ասեց:

»Թէ պարտքուհան ըլեմ,

»Թէ հորերս լցնեմ,

Իմ յոյսն ես դու,

»Բաժին ես հոգու:

»Օւլեր, կանաչիր,

»Խղճա՛րեասիրես.

»Աւքդ բանց, մտիկ,

»Տկոր խիզանիս...

»Վերև՝ ու ներքև,

»Երկիր ու երկին,

»Ծարաւ մի՛ թողնէք

»Իմ յոյս ցանածին...

Յնրտ է և սրտու,

Կասկ է դուռն ու կտուր:

»Տօ մարդ Աստուծոյ,

»Ինչ ես փիթր անում.

»Գնա՛ տէրտէրանց.

»Ոտի տակն ընկիր,

»Եւ մի թաղար հաց

»Իր շահովն ուզիր:

Մարդը դուրս գնաց,

Արտասունք դառը

Աւքերում ցուաց.

Եւ այն տան մայրը

Համ բուրդը մանեց,

Համ բարակ երգեց.

»Տա՛—տա, տա՛—տա, ձին ա գալիս,

»Բախրի փսլինք շաղ ա տալիս.

»Խեղճ՝ մազկերանց սև սիրտ տալիս.

»Խեղճ՝ ու նաչար վայ ձեր օրին,

»Լընակ կը տաք գարէ հացին...»

Շուտասելուկներ.

Մածկալը մածին, մածր մածամօր անկաջին,

Բարածր՝ ստ, ճլ վրօ տ — վար արա,

Բարա — ճր ստ, — ճլ վր ստ — ցել արա:

Չուռնաչի ջիլփին զուռնէն զլած ծնդրապար
է ածում.

Հն ածա, աղջիկ—պար.

Հն ածա, տղա—պար: (կրկնել.)



Չմեռը գիւղում.

Այժմ էլ ձմեռը,

Կապուած է աշխարհը,

Լցուեցին գոմերը

Եզն ու կովերը:

Գիւղում լուսեթին—

Չկա ձէն ու ձուն:

Մի մուկ գոմ—օգից

Լսվումեն ձայներ,

Մտած են այն տեղ

Պարապ մարդիկներ՝

Ասումեն պունգլեր:

Վոնի դու ասա.

95. Հէրը դուզ, մէրը կեռ,
Տղէն խելօք, թոռը գիժ:

—Վ ազան փայէն—հէրը դուզ,

Վ ազն—ինքը—մէրը կէռ.

Խաղողն օրհնած—տղէն խելօք,

Գինի, արաղ—թոռները գիժ...

Չիմի ես Կոնի,

Շատս լաւ լսի:

96. Հէրը կէռ ա, փէտ ու երկաթ,

Մէրը դուզ ա—չունի խասիաթ,

Նոքար ունի—պտղին չասրաթ.

Բերաւ Ամին,

Տարաւ քամին...

Տ Ե Ս Ա Ր Ա Ն .

Կանաչ դաշտերից և ծաղիկներից
Քաղցր հոտ է փչում, թռչունքն են փայելում:
Ծիծաղը երեսին՝ սարերի դռները
Աչքով են անում—ոչ ով չի տեսնում...

Քչքչում է ջուրը—հեռու ձեն ածում,
 Նա ունէ կանչում ե շուտ—շուտ փախչում:
 Մէկ էլ տեսնում ես ամբերը բարձրից
 Գոռում են—գոռում, մի տեղով քաշվում:
 Հեռու ճամբորդն է սհից փայտ դառնում,
 Սուրբ Սարգիսը մտին՝ երեսին խաչ քաշում...
 Ա՛հ ինչ սիրուն տեսարան աննման,
 Ա՛լ կը մտածէր թէ՛ նա էր Հայաստան...

Շուտասելուկ

Քարափի քարաթոթոշին քարապրանուկ արին
 քարը քներակին գիպաւ, քարխէց դառաւ: (կրկնէլ)

Գառները դաշտում:

Ա՛րևի ցոնձողը հէնց որ բցում է,
 Մեր ուլանոցն էլ գարդակվում է:
 Ա՛մէկ գառները կանաչ դաշտերում
 վշտի են տալիս—ծաղկի հետ խաղում:
 Ա՛խ, նրանց լեզուն չորանն է դիտում,
 Զորանն իր արև նրանց է բաշխում...

Հանելուկներ.

- 97. Մինը կայ, կենդանի չէ, թուխս ենք դնում,
 ճուտեր է հանում:
- 98. Քոյր ու եղբայր են, մինն առաւոտն է ծնում,
 երեկոյեան մեռնում, միւսը երեկոյեան ծնում,
 առաւոտը մեռնում:

Հայրենիքի մասին.

Ա՛մենքն էլ իրենց երկրին Հայրենիք են ասում:
 Մեր հին պատմական Հայրենիքն էլ Հայաստանն է:
 Հայաստանը առաջ գորաւոր թագաւորներ ունէր,
 բայց այժմ չունի. նա ուրիշ թագաւորների ձեռքի
 տակ է: Հայաստանի անցեալ ու ներկայ զրութեան
 մասին շատ երգեր ու խաղեր կան շինած.

Մեր Աղբը Հայ է,
 Հողը Հայաստան.

Ազգը գովելի,
 Երկիրը բերրի:

Մենք էլ զաւակ ենք,
 Հայոց Սուրբ Ազգի,

Եւ նորա ծոցում

Լինենք քաջ որդի:

Չեր տեղը դպրոցն է.

»Տղէրք, վերկացէք,

»Քաջութեան տեղ է.

»Ինձ հետ սիրտ առէք.

— Խօսողը վարդանն է:

— Ի՛նչ անենք, ի՛նչ անենք, ահա պատ-
րաստ ենք,

Մենք յիմար—քնած չենք, փոքրիկ ենք,
բայց քաջ ենք:

»Ի՛նչ պիտի անենք

»Շատ գործու բան ունենք.

»Իեռ առաջ շուտով

»Դասերս սովորենք:

— Դէ շո՛ւտ վեր կենանք, ընկե՛րք,
ո՛ր գնանք,

Եհա թէ ո՛ւր—Դպրոց պիտ գնանք...

Շուտասելուկներ:

Յզե՛, յզե՛, հինգ կորըզե՛ վա՛յ իմ
մի տարեկան մողի:

Հանելուկներ.

100. Մի շուշա թանաքով լիքը, կէսը սև, կէսը
սիպտակ:

101 Մի չարխ է, միշտ պտըտում է, սև ու սիպտակ
որդիկ է թաղում, ինքը կենդանի մնում:



Մենք եղբայր ենք.


Մենք եղբայր ենք.

Մի տանճարում մկրտուած.

Մի ցեղից ենք:
Երկու բանի նուիրուած:

Մենք եղբայր ենք,
Եկէք սիրով գործ տեսնենք,
Մեզ և Ազգին
Համեստութեամբ ճանաչենք:

Մենք եղբայր ենք.
Միշտ միաբան բան շինենք.
Եւ մեր կեանքը
Քաջութիւնով անց կացնենք...



Շուտասերուկներ.

Միրանի ծառին, ծաղիկը ծէրին:
— Ապեր, Ապրէսանց պռատ կրպօն ասեց քու
հօր սեպուիկ պռոշը կպրտտ: (կրկնէ)




Որքե խնդիրքը.

Գիւղացի որք երեխան բաղդի բերմամբ կար-
դում էր ճաշ քաղաքի Գպրոցում: Երբոր նորա բա-

բերարք մեռաւ, նա անտէր մնաց: Էլ չը կարողացաւ
շարունակել ուսումը. բայց արդէն նա բաւականին
սովորած էր: Վերջում նա ոչ բնակվելու տուն ունէր,
ոչ հաց ու ջուր, ոչ շորեր ու զրքեր... խեղճը ման
եկաւ, ման եկաւ, էլ բարերար չը գտաւ: Տեսաւ
ժամանակն անցնումէ, այնուհետեւ փողոցներում անց
ու դարձ անելիս, առանց ամաչելու, ինքն—իրան
կրգում էր իր յօրինած քաղցր երգը:

Ես զրկուած եմ հօրից, մօրից,
Չունեմ մէկ ճար մարդիկներից .
Կարմիր արևն իմ չէ փայլում,
Ե՛ւ բաղդ, ե՛կ կեանք ինձ են խաբում:
Բարի մարդիկ ինձ օգնեցէք,
Սիրուն մայրեր ինձ պահեցէք:
Իմ բնկերներ հազած, զուգած,
Տաք սննեակում են նստոտած.
Արդ կարդում են նրանք զրքեր,
Եւ խաղ անում միշտ անհամբեր:
Բարի մարդիկ ինձ օգնեցէք,
Սիրուն մայրեր ինձ պահեցէք...



Հանելուկներ.

- 102. **Մի խորով խտտ՝ կողքը ցլտտ:**
- 103. **Երկու օթախ՝ մի անանի:**

104. Չէն ունի—բերան չունի, ման է գալիս—ասներ չունի, հարամի է—Սուր չ'ունի:

105. Ինքը մէջը, պողերը դուրսը:

Հայր և որդի.

(Չորրորդ.)

Աստ ինձ բախաս,

Երբ որ մեծանաս,

Խեղբ—միտք ունենաս,

Ինչ պիտի դառնաս:

Երբ որ մեծանամ,

Ես էլ մարդ լինեմ,

Քեզ նման կը դառնամ,

Քոյ խելքից կուսնեմ:

Ինձ պէս որ լինես,

Էլ ինչ դարդ մօրդ.

Չէ, ինձ խափուսես,

Աստ՛ դու սրտինդ:

Քեզանից լաւ մարդ

Յոյս կայ որ դառնամ.

Ունեմ մօրի զարդ,

Իսկ դու ինչ, անգրաս:

Այն անգրաս եմ,

Ես էլ եմ ասում.

Միայն քեզ պէսին

Տալիս եմ ուսում:

Ես ուրանում չեմ,

Սիրելի՛ հայրիկ,

Եւ մուսանալ չեմ

Քոյ սուրբ երախտիդ:

Ապրես իմ բալս,

Եւ մտիկ կ'անես

Խեղճ մօրդ վերս,

— Ես էլ է ինձ պէս:

Որ այդ էլ չ'ասես,

Ես հասկանումեմ.

Նորա սուրբ կաթնով

Չէ՛ մէծացած եմ...

Իմ անուշ բալս,

Այդ լեզուդ ուտեմ.

Վաղը քեզ համար
Մի մատաղ կանեմ:

Գոգ արան մատաղ:

Որ լինեմ ես սաղ.

Ուսումն աւարտեմ

Եւ ձեզ շատ կ'օգնեմ:..

Ինչ պիտի դառնամ,

Որ մեզ օչլ օգնիս.

Որդի դան տերտեր,

Նա ունի շատ խեղ:..

Տերտերութիւնը

Լաւ բան չի, հայրիկ,

Նորա դործբունը

Թէ և կան բարիք,

Միայն շատ ծանր է

Նորա լուծ սրբիկ:..

Բա ինչ կը դառնաս,

Սիրելի սող,

Ե՛կ հեքեմ սիրի,

Փող, փող աշխատիր:

Հայր, ծիծաղում եմ,

Փողը ինչ բան է,

Բարի անուն չէ,

Հոգու կերակուր չէ:

Ա՛խ, այն հեքիմը

Գիտես թէ քանի՛

Հիւանդի յոյս է,

Մահուան սպառնալ է:

Բա էլ ի՞նչ մնաց

Չորան չես դառնալ,

Բաղմանչին վատ է,

Երկրագործը հալալ:

Հայրիկ մի բան կայ,

Ես նրան կը սիրեմ.

Բոլորը նորա

Փառքին կը բաշխեմ:

Իմ խօսքն այն է՝

Բարի մարդ լինել,

Իմ բարութիւնից

Աշխարհք կերակրել:

Ուզումեմ լինել

Ես լաւ ուսուցիչ.

Դորանով միայն

Կը լինեմ փրկիչ:

Մօրս կաթման հետ

Սիրտս է մտել
Այդ բարի մտքը —
Վարժապետ լինել...

Այդ հաւանում չեմ,
Թէ կուղ մեղադրես.
Դու միշտ երէխանց
Ղալմաղալ կը լսես:
Յիմար խալին էլ
Չը դիտէ պատուել.
Իր վաժապետին —
Շատ քիչ է փողն էլ...


Հայրիկ ես փողի
Չեմ ծառայելու,
Պէտք է որ բարի
Զաւակ լինեմ բուս.
Դու ինձ չը գրկեց
Ուսումնարանից.
Ես եւ չեմ շնորհիլ
Իմ նպատակից:
Մարդիկն ինձ կ'ասեն —
Բարի վարժապետ.
Դա էլ չէ էժան,
Ոսկու է մաղան...

Մի հողալ երբէք
Միամիտ կարգալ,
Մեր բերնի թիբէք
Ուսմանդ գին կանենք...

Բերանիդ մատաղ,
Այ իմ բերբար,
Այժմ ես խաղալ
Կը սկսեմ կարգալ...

Հանելուկներ

- 106. Էստեղից մինչև երևան, մանր — մանր քրէզան:
- 107. Տասն երկու հազուստ ունի, ոչ մինը կոճակ չ'ունի:
- 108. Թփի ձիներին նստած, կարմիր շորերով վարժարուած:



Մեր բանը.

Խօսքով էլանք, մոռացանք,
Դասեր ունենք, ծուլացանք,
Պունդլեր ասենք, ուրխանանք,

Յետոյնատենք, գիրք կարդանք:
Էսպէս է միշտ մեր բանը,
Նախ մոռանալ ամենը.
Ապա սկսել կարդալը,
Սիրուն ձայնով երգելը:

Կանաչ ու կարմիրը.

Ամենքն էլ տեսած կը լինեն երկնքի «կանաչ ու կարմիրը» — աղեղը, որ ասում են «ծիածան»։ Շատ անգամ «կանաչ ու կարմիրը» այնպէս մտիկ է երևում, որ մարդ կարծում է թէ կարող է բռնել բայց գնում է, գնում, չի կարում հասնել։ Գիւղական երեխայքը նորան տեսնելիս ուրախանում են ու երգում —

Լ'նձրեն եկաւ, անցկացաւ,

Արեն աչքը դուրս բերաւ,

Պարզ երկնքի մի կողմին

Կանաչ ու կարմիր, դուրս եկաւ:

Կանաչ ու կարմիրը


Լ'զեզ աղբօր ծոցը,

» **Սև ու սիպտակը**
 » **Թուրքերի ծոցը...**



Հանելուկներ.

- 109. Մի խողովակ տաքութիւնը դուրս է թողնում, սառնութիւնը ներս ընդունում:
- 110. Մի բան կայ, ամենքն էլ ունեն:
- 111. Երկուսին էլ տամ, զլսիցը ծիք տամ:
- 112. Փէտէ ոտնաւոր, փէտէ զլխաւոր:
- 113. Կով է, կով չի, կաթն է տայի, հորթ չ'ունի:



Ծնողները իրենց աղջկներին անչափ սիրելով, նորանց անունը զնուակն բնութեան ամենագեղեցիկ ու հոտաւէտ ծաղիկների անունից: Մանուշակ են գնում, որ երեխան էլ մանուշակի հոտն ու քաղցրութիւնը ունենար: Վարդի—կոնա, Շուշան, Նարգիզ են ասում, որ զորանց պայծառութիւնը ու գեղեցկութիւնն ունենար: Այդպէս է միշտ —

Մինը երկուսին.

Ծաղիկ կայ—անունը մանուշակ,

Աղջկանն էլ կասեն—Մանուշակ.

Ծաղիկ մանուշակ,
Աղջիկ Ընուշակ:

Երկրիս վրա երկունս էլ զարդ են,
Երկուն էլ սիրուն, քաղցր հոտ ունեն,
Մինը մարդկութեան,
Միւսը բնութեան:*



* Գարնանը սարերի գոշերն ու լայնատարած տախտերը ծածկվում են կանաչով ու հազարերանգ բուսականութիւնով: Գիւղացիները բոյսերի անունները ոչ թէ միայն գիտեն, այլ և նորանցից գեղորայք են պատրաստում: Օրինակ. Յ ա ա տ ն ի — փուշ ունեցող բոյս է: Բ ա ր թ մ ի ն ա կ — ջարդում են և վէրք առողջացնում: Կ ա չ ա ղ ա կ ի — Ս ա պ ու լ ն — երեխաների ձեռնասապունն է: Կ ծ դ ու կ — զոխը ուտում են: Գ ա ու ը — լայնափոթով փուշէ, զոխը և արմատը ուտում են: Պ ա պ ա ժ ի ժ ի — երեխայքը զանազան խաղալիքներ են շինում: Ղ ա ն դ — երեխէրքը զանգի — զանդի են խաղում: Ի շ ա կ ա թ ն ու կ — մինատամի դեղ է: Պ տ ի դ ե ղ — մանր կոտորում են ու թանով շաղախում, ուտեցնում հաւերին: Ե ղ ա ծ ա ղ ի կ — շատ անուշ բուրմունք ունի և ամեն տեղ չը կայ: Գ ե ղ ն ա ծ ա ղ ի կ — միւսը վէրք կը շինի:

Հանելուկներ.


- 114 Մի գործուածք է, ձեռք չի ղիպած, թէլ չի տուած, ամեն գոյն ունի:
- 115. Երկու չաթու մի սարում վէր ընկած:
- 116. Երկու եղբայր՝ ճանապարհի աջ ու ձախ կողմում — միմիանց չեն տեսնում:



Խ ո ո ա — սորանից թէլ էլ են շինում, նամահոտ ամանն էլ լվանում ջրովը — կտրումէ հոտը: Հ ի ս կ ո տ — զոխը ուտում են: Կ ա ր մ ր ա ծ ծ ու կ — ծ ծ ու մե ն նիւթը — քաղցրէ: Ծ ն ա դ ե ղ ն ա ծ ա ղ ի կ: Տ ր ի չ — զուխ ավոց բոյս է, որի սև գլուխները ցորենի հետ խառնում են և աղում, թխած հոցը համով կը լինի: Գ ա ղ տ ե կ ո ա — վերքի երեսը լիզելով — առողջացնումէ: Մ տ ի — ճին ճղ ա կ — ծայրը յողորվում է, ասդի բարակութիւն ունի: Ս ի պ տ կ ա ծ ա ղ ի կ — գեղ են շինում: Ս ի ր ի — ս ի ր ի վիճակ են բջում: Լ ու ա ծ ա ղ ի կ • կ ա տ ու ա խ ո տ են, են... Գիւղական երեխայքը այս բոլորը գիտեն:

Ծան. հեղինակի.

Հայրիկ ու մայրիկ
 Բարութիւն արէք,
 Եղբայր ու քոյրիկ,
 Դուք էլ օգնեցէք.
 Երբ ես մեծանամ,
 Կտրիճ մարդ դառնամ
 Եւ ձեզ արժանի
 Յարգ—պատիւ կը տամ...



Հուտասերուկ.

Ձեր ձրի ջրացի ջրեցը ինձ ձրի ջուր տաին:
 (կրկնել.)


Լաւը լաւին,
 Վատը վատին:

Խուրմայ կայ — պտուղ է,
 Խուրմա կայ — անուն է,
 Ծառի պտուղը խուրմա,

Պոմէի անունը — խուրմա,
 Լաւը լաւին,
 Վատը վատին:

Խնձոր կայ — կարմրաթշեկ,
 Խնձոր կայ — աչեր պլշեկ.
 Ծառի պտուղը խնձոր,
 Եզան անունը — խնձոր,
 Լաւը լաւին,
 Վատը վատին:

Նարգիզ կայ — ծաղիկ է,
 Նարգիզ կայ — կովիկ է.
 Նարգիզին անուշ հոտ,
 Կովիկին սիրուն հորթ.
 Լաւը լաւին,
 Վատը վատին...



Ասացուածքներ:

Պաս ուտեմ, պաս չ'ուտեմ, թանկ սպաս էլ
 չը կայ, որ ուտեմ:

Գողեն տեսնողը գող ընկեր կունենայ:
Տուն փոխես, տանովը մին կը քանդվես, գիւղ
փոխես, գիւղովը մին կը քանդվես:

Արագոճի—քնամիջի.

Եթէ գարթուն ես—արագոճի ես.
Եթէ քնած ես—քնամիջի ես:

Երազես միջում.

Երբէք տեսած չ'եմ,

Մի վագր ու արծուի,


Եւ փեղ ահա ելի:

Ինչ կատարուեմ

Ես արագոճի,

Այն էլ տեսնուեմ

Ես քնամիջի:




Հաներուկներ

117. Չորս եղբայր միմիանց յետևից վազում են,
միմիանց հետ չ'են հասնում:

118. Անհող անջուր բնում է, առանց տերևի ձգ-
ներ է քցում:

119. Անսուր—անթուր՝ սրի պէս՝ սրտի մէջ է ցց-
վում:



✓ **Ինչն է սիրելի,**

Սիրուն ծաղիկ դաշտերի.

Հովհար քամին սարերի.

Ծաղկի հոտը, բոմու հովը

Ահա ինչն է սիրելի:

Կանաչ մարգեր պարտիզի,

Խնկան ծաղիկ նարգեզի—

Եւ ծաղիկներ մարգերի,

Ահա ինչն է սիրելի:

Բացուած կոկոն վարդենի,

Անուշահոտ թագուհի.

Ծաղիկների թագուհի.

Ահա ինչն է սիրելի:

Դէ ծափ տալով խումբ կազմենք,

Երթանք դաշտը և պարտէզ,

Խաղանք այնտեղ, ծաղիկ քաղենք,
Օգից ծծենք, սառ ջուր խմենք:



Վ Դէ գնանք:

Եւ ժամանակ է սիրով վարվելու,

Ահա միջոց է միմեանց օգնելու,

Դէ գնանք, դէ գնանք

Միմիանց օգնելու:

Միմիանց օգնելով մեզ պատրաստելու

Եւ ամեն գործում արի մնալու,

Դէ գնանք, դէ գնանք,

Արի մնալու:

Արի մնալով միմեանց սիրելու,

Ամեննեղութեանց մենք դիմանալու.

Դէ գնանք, դէ գնանք

Մենք դիմանալու:



Շուտասելուկ.

Չալ կշեղակի քու տեղակ
Թէ ամանչեմ— ծիւ ծիւ կը կանչեմ:
Չարթը լաւ է չարթը քեզ,
Հար լաւ է չարթը քեզ,
Թէ չես ուզիլ՝ ճանճը քեզ:

Վարկուտ եկաւ:


Ամբը շատ է բարձրացել,
Երկինքը կապտել, տըռզել.
Քամի չը կայ շարժուն,
Որ ցրէ ամբերուն:

Ահա հիւսիս սեւակնեց,
Եւ մեծ վշտոց էլ լսվեց.
Մեր գիւղում տէր—Մարկոսը
Ձանգ հարելը սկսեց:

Սարսափեցին բոլորը
Ամբի ուժգին գոռոցքից.
Օձաձև նեւ—սրերը
Թուչումէին երկնքից...

Անց չը կացաւ քառորդ ժամ,
 Վշտալով դուրս եկան
 Մեծ և փոքրերն անգամ
 Եւ դաշտերում լաց եղան...

Լաց մի՛ լինի գիւղացի,
 Տէրը կրկին ձեզ կ'օգնի,
 Կրկին կը տայ ցորեն—գարի,
 Եւ առատ խոտ—պտուղ բարի:



Շուտասելուկ.

Խրձան փէնջակն արտումը,
 Խոտի բլուրը բաղումը.
 Խրձադէզն ու խոտաբլուրը
 Կերան էչն ու գոմէջը.

Ա՛յ խրձատէր,

Ա՛յ խոտատէր:



Խ ա ղ Ե Ր .

Միշտ աշխատել և չը խաղալ, չը հանգստանալ, այդ էլ մի բան չէ. մարդ անդամալոյժ կը գառնայ. երեխան էլ ուժ ու զօրութիւն չի ստանալ, մարմնապէս չի զարգանալ: Աշխատելն ու հանգստանալը, սովորելն ու խաղալը—եղբայրներ են:

Խաղ անելուն մենք ասու մենք—մարմնամարզութիւն: Զանազան տեսակ խաղեր կան: Ամենալաւ և հանգիստ խաղերից երկուսն էլ յշարամոլիւն և Պահունիս կամ Պահուկ—պահուկիմն են: Բայց օրինակ ջերա—ձերաւ, յարի—չորանիւս, յձապատենիւս, Բողորկենիւս, յկալ—միջիւս, յձուս—ձուտիւս և այլն խաղերը բաղաբացի երեխայքը չը գիտնեն: Պէտք է սովորել. —

Երեկոյեան լաւ է խաղալ
 շարամոլի,
 Ընկերն ընկօր հետ տափ կենալ
 Մէջ կալերի.
 Մինի աչքը ջուխտ ձեռքերով
 Միւսը կաշնի.
 Վերջը գնա՛ մի ընկերով
 Նրանց գտնի.
 Ապա յետ գան քնացածները
 Զայն հանելով.

Բինում պրպղեն, միմեանց կաշեն

Ծկլթալով:

Ազատները նրանց ծեծեն
Հեռու մնալով:

Ապա մայրը մինին կորի
Ոտին տալով:

Էլի սկզբն նորից խնդալ
Միշտ կրկնելով:

Ճաշից յետոյ սէտք է խաղալ
Պահաճունիս:

Կարգով կանգնել ու հասկանալ
Մին — մին:

Մինը մայր է ձեռքում բռնած
Քարունի:

Յեռակից միշտ նա անց ու դարձ
Պիտ' անի:

Թաքուն դրեց քարը ձեռքում
Գաղելով:

Արամը յանկարծ փախաւ, զկաց
Վազելով:

Յեռնից նրանք շուտ կորեցին
Գլխարկով:

Տղերքն այդպէս շատ խաղացին

ժպտալով:



Մեծ նանը,

Ծերը տանիցդ անսպաս լինի — ասու մէ գիտունը:
Ճշմարիտ որ՝ ծերը ասն մեծ սիւնն է, հիմքն է, որի
վրա է ամբողջ շինութիւնը: Տունն էլ է հնացել,
նանն էլ ծերացել և նորան մեծ նանն ենք ասում,
բայց ասն կառավարչական մասը դեռ նորա ձեռքին
է: Նա է ընդունում բոլոր եկող — գնացողին, նա է
ճանապարհ գնում: Նորանից հարսները զք խօսկանս
են, նորա առաջն իրաւունք չունեն ձէն — ծպտուն
հանելու: Հետեւելով իր երկու թոռներին,

Սուվրէն քցել է մեծ — նանը,

Պատրաստել ամեն բանը,

Մէնակ նստել է նա կողքին,


Աչքը քցել դրան ճամբին:

Երկու տղայ յանկարծ մտան

» Էս ձեզ մատաղ — ասաց մերնան,


» Դուք սովորեցէք, կարգացէք լաւ,

» Ես ձեզ համար կ'եփեմ փլաւ:
 —Նանի էսօր Հմայեակը
 Լաւ շք պատմեց իր դասերը:
 » Սուտ է, սուտ է, ես էլ շատ լաւ,
 » Ինքն էլ շատ լաւ, կուտենք փլաւ:»



Հանելուկներ.

- 120. Ա. Լ եզր, չա. Լ եզր բանի բարձեմ՝ տար եզր:
- 121. Ա. աւուտէնց բոյ մայրը վեր կենայ--
 օջաղում կարծիրը բաց անի:
- 122. Մեզ մինն ունենք՝ մի ոսնանի,
 որ զուրս կը դոյ դայլը կը տանի:



Պառաւի միտքը.

» Զ՛՛՛՛—Ղ՛՛՛՛ Ղ՛՛՛՛—Ղ՛՛՛՛ հաւեր,
 Ի՛՛՛՛ որձակներ—վառիկներ,
 Եկէ՛ք, եկէ՛ք կրկչալով
 Կերէք, կշտացէք սիրով:
 Դրե՛լ եմ քթոցում բնակալ,

Որ ձու ածէք ինձ համար,
 Չուն կը պահեմ—պահպանեմ,
 Մինչև աղեղ փէսան գայ—
 Չուածեղ կանեմ—ուտեցնեմ...
 Զ՛՛՛՛—Ղ՛՛՛՛, Ղ՛՛՛՛—Ղ՛՛՛՛ հաւեր,
 Ի՛՛՛՛ որձակներ, վառիկներ...

Լսացուածքներ.

» Ասա՛ Տիգրան. »
 — Տիգրան:

» Ոտը ընկի Հայաստան, լինես նրան օղնական,
 բանաս այնտեղ վարժարան:

» Ասա՛ կատու. »

— Կատու:

» Ճիտդ ընկի չաթու, եսիր մնաս շորթու: »
 — Բա դու:

» Ես ոչինչ: »



Մուրացկանը.

Ամենքն էլ ողորմած սիրտ պէտք է ունենանք։
 Ողորմութիւնը Աստուծուն են տալիս, Գու տո՛ւր կա-
 ղութեանդ չափ, Աստուած էլ քեզ կը տայ: Բարի
 սիրտ էլ պէտք է ունենայ: Ինչ օգուտ, որ կամա—
 թէ ա կամայ տալիս եւ ողորմութիւն ու չարութիւն-
 ներ էլ զործում, ընկերներիդ էլ զրկում, զրպար
 պարտում: Բարեպաշտ մարդոց տան դռնից ու զողջ
 դատարկ բռնով չէ հեռանում... Մեր Ազգիցն էլ
 մուրացկաններ կան. բայց երանի՛ թէ նորանք չը լինէին:
 Ահա՛ նոյն պէս—

Գուռը ճռռաց և մի աղբատ
 Գձուձ, նիւար և անազատ,
 Պարկը ուսին, փէտը ձեռքին՝
 Գլուխ տուեց տան պառաւին,
 Անհամարձակ ձեռքը մեկնեց,
 Եւ խեղովելով նա ձայն հանեց:

- » Հոգուդ մեռնեմ, նանի, բաջի,
- » Ողորմութիւն արա ինձի.
- » Ո՛հ անօրէն թուրքեր—քիւրդեր
- » Մեզ թալնեցին, տունս քանդեցին.

- » Զաւկըներուս ալ գերեցին,
- » Ես ընկեր եմ սարեր—ձորեր,
- » Հատ կ'ամանչեմ մուրալ, ուզեր,
- » Հոգիդ սիրեմ, նանի, բաջի,
- » Ողորմութիւն արա՛ ինձի...

Պառաւ նանը միտը քցեց
 Իր դարդերը, մուրացկանին
 Կմկմալով մասը տուեց:

- » Տէրը քեզ հետ, զարիբ աղբատ,
- » Աստուած լսի քո էդ գանգատ...



Չի և էշ.

...Չմեռն է: Մեր գիւղացին
 Ծանր բեռը բարձեց էշին.
 Չեռքն առաւ մէկ փայտ բղած,
 Եւ բզելով տարաւ ջրաղաց:
 Եւ տնքալով մեր հայվանը,
 Խօստ տանջվելով տարաւ բեռը.

Ջարդուած, թափուած էրր ետ դարձաւ,

Մութը զոմում նա կապկեցաւ.

Խեղճ, ինքն—իրան մուտի արաւ,

Իր վիճակից զանգամովեցաւ:

»Մեզ նման էլ աշխարհքումը

»Ո՞վ կայ գործին հալալ մշակ.

»Բայց մեր տիրոջ յիմար խելքով

»Մենք եղել ենք միշտ խայտառակ:

»Մեր ակերը մեզ բեռն է բարձում,

»Ինքն էլ վրէն նստում—քշում,

»Ծանրութեան տակ մենք անքալով,

»Կամաց քայլումենք անվրդով:

»Եւ նա դարձեալ հայհոյումէ,

»Նա զոռումէ, նա թափում է,

»Անխղճ կերպով նա մեր կաշին

»Ծակծկում է բիրը ձեռքին.

»Է՛հ, մի խօսքով, աշխարհքումը

»Չը կայ մեզի հանգիստ, դադար.

»Միշտ բեռան տակ, ո՛չ տօն, ոչ կեանք,

»Ոչ կիրակի կայ մեզ համար:

»Բայց այս ոչինչ:

»Գործը մենք ենք միշտ կատարում,

»Նորա հետ էլ ջարդվում, թակվում.

»Խօսան ու զարին միւսն է ուտում,

»Պատիւները անբանն ստանում:

»Բաւական է՛ ձի եղբայրը

»Մնումէ իրան քէֆին զոմում.

»Եւ իմ թիքէն նա խլումէ,

»Համ ինձ վերայ էլ ծաղրումէ:

»Մենք ախուր լայտումենք,

»Ծէլ էլ չը կայ որ կուլ քցենք.

»Ամա էս ձին միշտ կուշտ ուտում,

»Ախտումն էլ կռճունք թողում:

»Է՛հ, մակնիս, աշխարհքումը

»Մեզ ասումեն յիմար, ախմախ,

»Չեն քննում թէ՛ այսպէս մշակ

»Ուրիշն էլ կայ երկնքիտա կ...»

Այսպէս երկար դանգատ արեց

Գովի էշը և խիտ կզնուեց.

Յանկարծ մէկ էլ ականջները

Նա թափ տվեց, զռաջն սկսեց:

Չին որ կողքին մունջ կանգնած էր,

Եւ բողբոլը նա լսում էր.

Ականջները խշկոտացրեց,

Ոտքով քանդ—քանդ անեւն սկսեց:

Դուռը ճռուաց յանկարծ մտաւ

Տնատէր Պետօն և հէնց տեսաւ,

Որ սեւաթուխ իր քեահալան ձին

Վարչնել է էշի մօտին,

Եւ աջու ձախ ոտքով թակում,

Մռնչում է, խլըշկոտում...

Իսկ մոխրագոյն էշ եղբայրը

Տեղնուտեղը քնել, թմրել,

Եւ չորս ոտքով տափից մեխվել...

Յանկարծ յթը՛մբ գլխին տուեց

Թիու կոթով—գարթնացրեց.

Իսկ սև ձիուն ձեռք քսելով,

Ղաշաւն առաւ ու թխմարեց...

Ասացուածքներ.

Վա՛նը երբ կը վերջանայ:

— Աշխատելուց յետոյ:

Վա՛նը երբ կը սկսեն:

— Հանգստանալուց յետոյ:



Հանելուկների պատասխանները.

1. Լեզուն 73
2. Հրացան 83
3. Չու 93
4. Նուռը 103
5. Թորոն 113
6. Ճրագ 123
7. Թեւաչարիւր 133
8. Տրխարիզը 143
9. Խլինքը 153
10. Ականջները 163
11. Մանգաղը ձինը 173
12. Մորին 183
13. Հրացան 193
14. Գիրքը 203
15. Շերեփը 213
16. Մոշը 223
17. Տիգը 233
18. Վագը (որթն) 243
19. Կասկարա և կաթայ 253
20. Կուր 263
21. Ամբի գոռոցքը, արտը և հասկը 273
22. Ճկահարի ճաթը 283

- 23. Գութանի խոփը.
- 24. Տաքտեղ, ծիծակ.
- 25. Փայա և վաղը.
- 26. Մեռելն ու օգաւորները.
- 27. Ծծերը.
- 28. Ծաւքը.
- 29. Հրացան.
- 30. Կրեայ.
- 31. Մաղը.
- 32. Մանգաղ.
- 33. Հոն (հոնի ծառի պտուղը)
- 34. Ոտն ու արեխը.
- 35. Այգու խաղողը.
- 36. Բռին, գղումը.
- 37. Ագաղաղը.
- 38. Օրօրօց և երեխան.
- 39. Չիու ոտներն ու պայտերը.
- 40. Խնոցի, թան, կարագ.
- 41. Չրհորի խորութիւնը, լայնութիւնը.
- 42. Հայելն.
- 43. Չայնը.
- 44. վազը.
- 45. Թիթեռ.
- 46. Չուրը.
- 47. Տաշտ, մաղ և ալիւր.
- 48. Արեղ և օտիւր.

- 49. Մեղրը.
- 50. Գիւղացու խալիթը.
- 51. Չու.
- 52. Փութը.
- 53. Զրաղացաքարեր.
- 54. Սաջ և սաջեհաց.
- 55. Սաջը.
- 56. Ճղսուր և ճղարի.
- 57. Ամբը.
- 58. Ածելի.
- 59. Սանդրը.
- 60. Սանդրը.
- 61. Օր ու գիշեր.
- 62. Ամբը.
- 63. Տեղաշոր, անկողներ.
- 64. Կերակրով լի պղինձը.
- 65. Ծիծեռնակ.
- 66. Չուքը, մատները և եղունգները.
- 67. Մեծ պատը.
- 68. Սաղը.
- 69. Թուրքի դալանը.
- 70. Հայել.
- 71. Թան, քամանչա, շոնուր.
- 72. Տրէխը.
- 73. Չայնը.
- 74. Ճրագը և լոյսը.

- 75. Կակարէնքը կրակին դնելիս.
- 76. Աւելը.
- 77. Բողկը.
- 78. Գզերն ու բովկէն.
- 79. Ժամ ժողովուրդ և քահանայ:
- 80. Կտուրները պնդացնումեն անձրևացին

Կղանակում հաստ տախտակներով ծեծելով.

- 81. Նոռը.
- 82. Կակարէնքը.
- 83. Գերեզմանի խորքը.
- 84. Գարունը.
- 85. Կենդանիք.
- 86. Երկանքը.
- 87. Խաշխաշի բոյսը.
- 88. Զուր ու սառոյց.
- 89. Սիսեռ և ծրա բոյսը.
- 90. Թանաքը.
- 91. Արտը.
- 92. Երկանքը.
- 93. Աւքերը.
- 94. Դրան փակիչ.
- 95. Այգին.
- 96. Մանգաղը, արտը, երկրագործը և խըղ-
ձու թիւնը.
- 97. Կարտով.
- 98. Արեգակը և Լուսին.

- 100. Աւքերը.
- 101. Տարին կամ ժամանակը.
- 102. Խող.
- 103. Քիթը.
- 104. Գետը.
- 105. Թուրը.
- 106. Չիու ոտնատեղը.
- 107. Կաղամբի թերթիկները.
- 108. Վարդը.
- 109. Շնչառութեան խողովակ.
- 110. Ամենքին էլ անուն է հարկաւոր
- 111. Կշեռքը.
- 112. Սայլը և չորս եղներ.
- 113. Վազը.
- 114. Ծաղկալից դաշտ.
- 115. Յօնքերը.
- 116. Աւքերը.
- 117. Սայլի ակները.
- 118. Բախրի եղջիւրները.
- 119. Վատ խօսքը.
- 120. Գդալը.
- 121. Կրակը.
- 122. Սունկը.



Ընորհակալութիւն յայտնելով ձեր պ. պ. բաժանորդներին և մասնաւորապէս Օրբէլ Օրբէլեանցին, որ սա իր աշխատութիւնը չը խնայեց) բաժանորդներ գտնելու, հրատարակում ենք բաժնորդագրութեան ընդհանուր ՑՍԻՑԱԿԸ:

	Օրին. թիւ.	Ու. ն.	Կողմ.
Կարապետ վարժապետ Բէլախեանց.	25	10	—
Օրբէլ վարժապետ Օրբէլեանց ...	4	5	—
Ստեփան Տէր Խորայեանց ...	10	4	—
Իվան Ալէքսէիչ Չիթախեանց ...	—	10	—
Ալէքսանդր Մանթաշեանց ...	—	5	—
Աւետիք Էնֆիաճեանց ...	5	2	—
Օր. վարդուհի Ա. Էնֆիաճեանց Մութափեանց ...	10	5	—
Ալէքսանդր Մելք--Աղարեանց ...	—	—	—
Միքայէլ Աբրահ. Բաղինեանց ...	2	1	20
Գանձակեցի Մկրտիչ Ղալիչեանց ...	3	—	—
Մի ոմն ...	4	2	—
Մի ոմն ...	2	1	—
Բաղեշ Մոսէիչ Տէր Առաքէլեանց	4	2	—
Գէորգ Տէր--Առաքէլեանց ...	2	1	—
Գրիգոր և վասիլ Տէր-Առաքէլեանց	4	2	—
Խաչատուր Սահ. Խաչատուրեանց	—	—	—
Միքայէլ Տէր--Նիկողոսեանց ...	—	—	—
Գէորգ Ծովկանեանց ...	2	1	—
Ալէքս. Պետրոսեանց ...	—	—	—
Բագրատ Միրվէլով ...	—	—	—
Բարսէղ Միրվէլով ...	—	—	—

	Օրին. թիւ.	Ու. ն.	Կողմ.
վասիլ Բարասիւիչ Փուղեանց ...	—	1	20
Պետրոս Դափեանց ...	—	—	—
Թոմաս Խանդամիրեանց ...	—	—	—
Ստեփան Բորիսեանց ...	—	—	—
Իվան Խարազեանց ...	3	3	—
Զորջօ—Դուլսպով ...	2	1	—
Գէորգ Բէժանեանց ...	—	—	—
Գէորգ Գաւթեանց ...	—	2	—
Ստեփան Տէր--Մէլիքսեթեանց ...	—	—	—
Յովհաննէս և վահան Իզմիրեանց	6	3	—
Եղոր Պապիսեանց ...	2	1	—
Միքայէլ Շարիմանեանց ...	—	—	—
Իվան Ղ. Լազարեանց ...	—	—	—
Յակովբ Սայխիսեանց ...	—	—	—
Նիկողայ Փուղինեանց ...	—	—	—
Աննայ Ծովկանեանց ...	—	2	—
Ստեփան Մանուէլեանց ...	—	1	—
Միքայէլ Խախուտեանց ...	—	—	—
Կոստանդին Շալումեանց ...	4	2	—
Սէրգէյ Ասլամազեանց ...	2	1	—
Եղոր Արութիւնեանց ...	—	—	—
Միքայէլ փուղինեանց ...	—	—	—
Կոստանդին իր. Աբնարեանց ...	—	—	—
Լեոն Միրումիանց ...	—	—	—
Սէրգէյ Աւագեանց ...	—	—	—
Բ. Ծովկանեանց ...	—	—	—
Գէորգ Թուրազեանց ...	—	—	—
Շաւատարդ Զորիեանց ...	—	—	—
Մ. Բոտինեանց ...	—	2	—
Միքայէլ Միրզոյեանց ...	—	—	—

	Օրին. թիւ.	Բուք.	Կող.
Նիկողայոս փրիդոնեանց ...	1		40
Յ. Ա. Պապովեանց ...	2	1	—
Ամատունի... ..	3	3	—
Նիկ. Տէր Յակովբեանց ...	4	2	—
Մի ոմն	—	5	—
Արտէմ Տէր—Անդրէսեանց... ..	2	1	—
Զաքարիա Զարիանց... ..	—	—	—
Գրիգոր Զարջևմանեանց	—	—	—
Սափարեանց Գրիգոր... ..	—	—	—
Յոհաննէս Մակարեանց	—	—	—
Աղէքսանդր Տէր—գրիգորեանց ...	—	—	—
Յովհաննէս Մաղաթեանց	—	—	—
Յովհաննէս Սարգիսեանց	—	—	—
Սարգիս Ղարոզողեանց	—	—	—
Ստեփան Ամիրեանց	—	—	—
Ս. Ստեփանեանց... ..	—	—	—
Գրիգոր Դաւրիշեանց	3	2	—
Օր. Վառվառ և լիզա Դաւրիշեանց	2	1	—
Սամուէլ Դաւրիշեանց	1	—	50
Բաղշի Իւզբաշեանց	3	1	20
Տիգրան-բեգ Տէր Յովհաննիսեանց.	2	—	—
Կարապետ մովսիսեան Վարդանեանց	1	—	—
Հայրապետ Մանուկեանց	—	—	50
Բարսեղ Շարխմանեանց	—	—	—
Սարգիս զալամբարեանց	—	—	—
Սարգիս Շալամեանց	—	—	—
Անտոն Գովաթեանց... ..	—	—	—
Գրիգոր Տէր արրամեանց	—	—	—
Գարրիէլ Շախվերդեանց	2	1	—
Բարսեղ և Աննա Յովսէփեանց ...	—	—	—

	Օրին. թիւ.	Բուք.	Կող.
Գէորգ Մաղաբէիեանց... ..	1	—	50
Սողոմոն Ամիրեանց	—	—	—
Գրիգոր Աստուծատուրեանց	—	—	40
Լևոն Արափնեանց	—	—	—
Արշակ Զամոեանց	—	—	—

— 000 —

Համշուղա.

Յովսէփ քահ Արարատեանց ...	20	8	50
Տիրուհի Թէկէ Արարատեանց ...	3	1	20
Ովսաննա Արարատեանց	1	—	48
Արարատ Արարատեանց	—	—	—
Շուշանիկ Արարատեանց	—	3	—
Կոստանդին Օրբէլեան Օրբէլեանց.	2	1	—



Blatt.	Verf.	Blatt.	Blatt.
30	—	1	...
—	—	—	...
40	—	—	...
—	—	—	...
—	—	—	...

Einzelne

30	8	30	...
30	1	3	...
48	—	1	...
—	—	—	...
—	3	—	...
—	1	3	...



2323

885008

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0005888

